ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2020 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների
վիճակը Հայաստանում 2020 թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝
ԻԼԳԱ-Եվրոպայի աջակցությամբ (օգոստոս, 2021թ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱԺԻՆ 1. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 8

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ 9

ԼԳԲՏ անձանց նկատմամբ գրանցված իրավախախտումների նկարագիրը 11

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 13

Ֆիզիկական բռնության դեպքեր 15

Ընտանեկան բռնության դեպքեր 17

Սեռական բռնության դեպք 22

Բռնություն գործադրելու իրական վտանգի, սպառնալիքների և կոչերի դեպքերը 23

Անձնական տվյալների ապօրինի բացահայտման դեպքեր 24

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 27

Աշխատանքից ազատման դեպք 27

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 29

Կրթության իրավունքի սահմանափակման դեպք 29

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՀՈՒԳՈՐԴՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ 31

Ժամանցի վայր այցելելու արգելք 31

Տրանս անձանց վտարում վարձակալած բնակարանից 31

ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 34

Իրավախախտումների դիմումների ընթացքը 35

Իրավապահ մարմինների աշխատակիցների վերաբերմունքը 37

ԲԱԺԻՆ 2. ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ 38

Ատելության խոսքի կարգավորումները 39

Ատելության խոսքի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունը 42

Ատելության խոսքի օրենսդրական կարգավորման աշխատանքային խմբի գործունեությունը և արձագանքները 43

Բռնության հրապարակային կոչերի քրեականացում 44

Պաշտոնատար անձանց ատելության խոսք, խտրական վերաբերմունք 45
Ատելության խոսքի հանրային այլ դրսևորումներ 48
Նախկին ԱԺ փոխխոսնակի արձագանքը 48
Տարբեր հասարակական նախաձեռնությունների շահարկումները 50
Մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների հանրային խոսքը 55
Ատելության խոսքը մեդիայում 60
ԼԳԲՏ անձանց թիրախավորումը Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում 64
ԱՄՓՈՓՈՒՄ 70
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 72
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 77

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ[1]

Բիսեքսուալ (երկսեռական)	անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ
Գեյ	նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ
Գենդերային արտահայտում	անձի իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը
Գենդերային ինքնություն	անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր
Լեսբի	նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ
Սեռ	անհատի կենսաբանական ստատուսն է որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները: Օգտագործվում է նաև որպես անձի ծննդյան պահին արձանագրված սեռ
Հետերոսեքսուալ (տարասեռական)	անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ
Նույնասեռական	անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն սեռի և/կամ գենդերի անձանց հետ
Հոմոֆոբիա	վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ: Ներառական եզր է. հաճախ ներառում է նաև տրանսֆոբան (տե՛ս

1 Սույն եզրույթների հիմնական աղբյուրը՝ «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց. Ուղեցույց հոգեկան առողջության և առնչվող ոլորտների մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2017 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2018/06/professionals-guideline.pdf

	ստորև):
Սեռական կողմնորոշում	անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ
Տրանս կամ տրանսգենդեր	անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն: Հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար:
Տրանսֆոբիա	բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա
ՍԿԳԻ	սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում
ԼԳԲՏ	լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԵԽ	Եվրախորհուրդ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019 թ. սկիզբ դրեց այնպիսի իրադարձությունների, որոնք հետագայում պետք է փոփոխություններ մտցնեին հասարակությունների փոխհարաբերություններում, աշխատանքի կազմակերպման ձևերում, ողջամիտ հիմք հանդիսանային մարդու այնպիսի էական իրավունքների սահմանափակման համար, ինչպիսիք են տեղաշարժման ու հավաքների ազատությունը: Չինաստանում հայտնաբերված կորոնավիրուսային վարակը 2020 թ. ընթացքում համակեց ամբողջ աշխարհը, տարբեր երկրներ օրենսդրական փոփոխությունների միջոցով նախատեսեցին կյանքի՝ նախկինում բնականոն համարվող ընթացքի սահմանափակումներ: 2020 թ. գարնան սկզբին ՀՀ-ում մտցվեց արտակարգ դրություն՝[2] համաճարակի զարգացումը կանխելու համար: Դրանով տրվեց անձանց մեկուսացման, շփումներում ֆիզիկական հեռավորության պահպանման, աշխատանքի որոշ տեսակներ հեռավարով փոխարինելու, չճանապարհորդելու, հնարավորինս քիչ տեղաշարժվելու, մշտապես պաշտպանիչ միջոցներ կրելու գործընթացների մեկնարկը:

2020 թ. ՀՀ-ի համար բացասաբար նշանավորվեց ևս մեկ իրադարձությամբ. սեպտեմբերի 27-ին ադրբեջանական իշխանությունների կողմից Թուրքիայի օժանդակությամբ Արցախի և Հայաստանի ուղղությամբ սանձազերծվեց լայնածավալ պատերազմ: Այն հանգեցրեց քաղաքացիական անձանց մահվան, հայկական կողմից զինվորական մեծաթիվ կորուստների և գերեվարումների, թիրախավորվեցին քաղաքացիական բնակավայրեր, քաղաքացիական ենթակառուցվածքներ, մշակութային օբյեկտներ, առաջին օգնություն ցուցաբերող կառույցներ: Պատերազմը ավարտվեց հայկական կողմի համար տարածքային կորուստներով:

Թվում էր, թե այս կարևոր խնդիրներով հասարակական և իշխանական զանգվածների տրամադրությունների մտազբաղության պայմաններում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց նկատմամբ ատելությունը կմղվի հետին պլան, կնվազեն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության և/կամ գենդերային արտահայտման (ՍԿԳԻ) հիմքով խտրականության դեպքերը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեց ընթացիկ տարին, մարդասիրական այս սպասումները սին էին: 2020 թ. ՍԿԳԻ հիմքով խտրականությունը շարունակվեց. ատելության խոսք էր տարածվում սոցիալական ցանցերում, մեդիայում և ինտերնետային այլ հարթակներում: **Կազմակերպության կողմից արձանագրված դեպքերի թիվը 2020 թ.-ին եղել է 40-ը:** Ձևավորված աշխարհաքաղաքական վիճակը հանգեցրեց նաև այդ իրավախախտումների քննության ընթացքում մի շարք դժվարությունների. դանդաղեց քրեական գործերի քննությունը՝ առաջնահերթություն չունենալու և համավարակի ավարտի սպասման պատճառներով:

Սույն զեկույցը ներկայացնում է 2020 թ. ընթացքում Հայաստանում ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ապահովման տեսանկյունից տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

---

2 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թ. N 298-Ն որոշումը. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145261

Զեկույցի բովանդակային հատվածում ներկայացված են 2020 թ. ընթացքում խտրականությամբ զուգորդված ՍԿԳԻ հիմքով իրավախախտումները: Այն ներառում է նաև պետության ստանձնած պարտավորությունները այդ խախտումները կանխելու և տուժածներին պաշտպանելու ուղղությամբ, իրավապահ մարմինների արձագանքը և վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Մասնավորապես՝ արձանագրվել են ԼԳԲՏ անձանց՝ խոշտանգումից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, կրթության, աշխատանքային և այլ իրավունքների խախտումներ: Պետությունը, մի կողմից չի կարողացել ապահովել ԼԳԲՏ անձանց իրավունքների իրացման համար ոչ խտրական միջավայր, մյուս կողմից՝ ձախողել է իրավախախտումների դեպքում ԼԳԲՏ անձանց ոտնահարված իրավունքների վերականգնումը պատշաճ քննության միջոցով: ԼԳԲՏ անձինք զերծ չեն մնացել իրավապահ մարմինների ծառայողների ծաղրական և նվաստացուցիչ վերաբերմունքից, ավելին՝ գրանցվել են իրավապահ մարմինների կողմից նույնասեռական անձանց հարաբերությունների և անձնական կյանքի մասին տեղեկատվության բացահայտման դեպքեր:

Զեկույցի բովանդակային հատվածի մյուս մասը վերաբերում է ատելության խոսքին: Այն ներառում է վերլուծություն ատելության խոսքի կարգավորման ուղղությամբ՝ պետության քաղաքականության, կատարված օրենսդրական փոփոխությունների, պետական իշխանության և հանրային այլ անձանց կողմից հնչեցված ատելության խոսքի վերաբերյալ:

Զեկույցն ամփոփվում է տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ եզրակացություններով և պետական կառույցներին, ՀԼՄ-ներին, միջազգային կառույցներին ներկայացվող առաջարկություններով:

Զեկույցի հավելված բաժնում անդրադարձ է կատարվում նաև Փինքի կողմից վարվող ռազմավարական դատավարությունների ընթացքի մասին:

ԲԱԺԻՆ 1.
ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ

Մարդու իրավունքներն այն հիմնարար ազատություններն են, որոնցով յուրաքանչյուր անձ օժտված է իր ծննդյան պահից, և որոնք ուղեկցում են նրան իր կյանքի ամբողջ ընթացքում: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական պետություն, ապահովում է իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքների անխափան իրացումը: Այդ կապակցությամբ պետությունը Սահմանադրությամբ և մարդու իրավունքները ճանաչող միջազգային պայմանագրերով ստանձնել է երեք հիմնական պարտավորություններ:

Պետությունը պարտավոր է հարգել մարդու իրավունքները, այսինքն՝ զերծ մնալ մարդու իրավունքների ոտնահարումներից (պետության նեգատիվ պարտականությունը): Անհատի իրավունքների խախտումներ չպետք է թույլ տրվեն պետական մարմինների, ներառյալ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և պետական լիազորությամբ օժտված այլ անձանց կողմից:[3]

Պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություն՝ **պաշտպանելու անհատի իրավունքները երրորդ անձանց խախտումներից:** Այս պարտավորության ներքո պետությունը պետք է կանխի անհատի իրավունքների խախտումները տարբեր ֆիզիկական անձանց, կազմակերպությունների կողմից: Սա իրենից ենթադրում է նաև գործուն իրավական մեխանիզմների ստեղծում իրավունքների խախտումները արդյունավետ քննելու, խախտված իրավունքները վերականգնելու, խախտմամբ պատճառված վնասները հատուցելու ուղղությամբ:

Պետության հաջորդ պոզիտիվ պարտավորությունը **իրավունքների իրացման միջավայր ստեղծելն է:** Պետական իշխանությունը պետք է ձևավորի այնպիսի իրավական մեխանիզմներ և հասարակական միջավայր, որտեղ անձինք կկարողանան անխոչընդոտ իրացնել իրենց հիմնարար ազատությունները:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության առաջնային երաշխավորը երկրի բարձրագույն օրենքն է՝ ՀՀ Սահմանադրությունը, որը ամրագրում է, որ մարդու իրավունքները գործում են անմիջականորեն:[4] ՀՀ-ում մարդու իրավունքների գերակայությունը միաժամանակ ճանաչված է միջազգային պայմանագրերով և դաշնագրերով, որոնք վավերացվել են պետության կողմից: Այդպիսի միջազգային փաստաթղթերը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն, քան երկրում գործող օրենսգրքերը, օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը:[5]

Խտրականությունից զերծ լինելու և օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքները սահմանված են թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային կոնվենցիաներով:

Սահմանադրությունը արգելում է խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, հաշմանդամությունից, գենետիկական հատկանիշներից, աշխարհայացքից, սեռից, գույքային վիճակից, տարիքից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, ծնունդից կամ անձնական կամ սոցիալական

3 Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
4 Նույն տեղում, հոդված 3, կետ 3:
5 Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 5, կետ 3:

բնույթի այլ հանգամանքներից:[6]

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը ևս սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը: Դրանով ընդգծվում է անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը:[7]

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած բացառում, տարբերակում կամ նախապատվություն, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի կամ հատկանիշի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը կամ հանգեցնում է նման սահմանափակումների:[8] Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի:[9]

Միջազգային իրավունքում, որպես խտրականության տեսակ՝ առանձնացվում է ուղղակի խտրականությունը, երբ անհատը տարբերակված վերաբերմունքի է արժանանում նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ, ինչի պատճառը տվյալ անհատի որևէ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հատկանիշն է:[10] Անուղղակի խտրականությունը առերևույթ չեզոք դրույթ է, չափանիշ կամ գործելակերպ, որը կարող է որևէ խմբի անձանց համար որոշակի անշահավետ պայմաններ ստեղծել այլոց համեմատ:[11] Մեկ այլ տեսակ է ասոցացված խտրականությունը, երբ խտրական վերաբերմունքի է արժանանում այն անձը, ով չնայած չունի խտրականությունից պաշտպանվող հատկանիշը, սակայն կապված է այդ հատկանիշը կրող անձի հետ,[12] օրինակ՝ նրա ամուսինը, մայրը, հայրը և այլք:

Խտրականությունը պայմանավորվում է անձի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: Ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենքները, ո՛չ միջազգային պայմանագրերի մեծ մասը ուղղակիորեն չեն նախատեսում ՍԿԳԻ-ն խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է. իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից զատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ, որոնք կարող են տարբերակված վերաբերմունքի թիրախ հանդիսանալ: Սա նշանակում է, որ ՍԿԳԻ-ն կարող են և պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ ՍԿԳԻ-ն ամբողջությամբ տեղավորվում են

6 Տե՛ս Նույն տեղում, հոդված 29:
7 Տե՛ս Articles 1 (3) and 55 of the UN Charter, Article 7of UDHR. Article 2, 4 (1) and 26 of ICCPR, Article 2 of ICESCR, Article 2 of CRC, Article 14 of ECHR, Protocol No. 12 of the ECHR.
8 Տե՛ս HRC, General Comment No. 18, § 7
9 Տե՛ս ECtHR, Judgenment of 23 July 1968, Case of Certain Aspects of the laws on the Use of Languages in Education in Belgium. Willis v. United Kingdom, No. 36042/97, § 48, ECtHR 2002-IV, Virabyan v. Armenia, No. 40094/05, 02/01/2013.
10 Տե՛ս Non-Discrimination in International Law A Handbook for Practitioners, 2011 Edition, p. 17-18.
11 Տե՛ս Council Directive 2000/43/EC of 29 June 2000 implementing the principle of equal treatment between persons irrespective of racial or ethnic origin, (b) point of Article 2 (2).
12 Տե՛ս Molla Sali v. Greece [GC], 2018; Guberina v. Croatia, 2016, § 78; Škorjanec v. Croatia, 2017, § 55; Weller v. Hungary, 2009, § 37.

խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում:[13]

Այսպիսով Հայաստանի Հանրապետությունը պետք է հարգի անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը: Այն պետք է պաշտպանի ԼԳԲՏ անձանց պետական մարմինների ներկայացուցիչների՝ կառավարության, ոստիկանության, քննչական մարմինների աշխատակիցների ոտնձգություններից: Հավասարության ապահովումը միայն պետական մարմինների կողմից խախտումներից զերծ մնալը չէ, ուստի պետությունը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որ մասնավոր անձանց կողմից ևս թույլ չտրվեն ԼԳԲՏ անհատների իրավունքների ոտնահարումներ՝ պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Դեռ ավելին, նման ոտնահարումների դեպքերը պետք է պատշաճ քննության արժանանան, իսկ ոտնձգողները՝ պատժվեն:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ գրանցված իրավախախտումների նկարագիրը

2020 թ. ընթացքում կազմակերպության կողմից արձանագրվել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության ու արտահայտման հիմքով խտրականությամբ զուգորդված մարդու իրավունքների խախտումների 40 դեպք:

Որպես իրավախախտումներ են հաշվառվել.

- *ֆիզիկական, այդ թվում սեռական բռնության դեպքերը,*
- *բռնություն գործադրելու իրական սպառնալիքները, բռնության կոչերը,*
- *անձնական կյանքի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվության ապօրինի տարածման դեպքերը,*
- *ընտանիքի անդամների կողմից բռնությունը, ճնշումները,*
- *ազատության սահմանափակման դեպքերը,*
- *կրթական հաստատությունից հեռացնելու և աշխատանքից ազատելու դեպքերը,*
- *այլ իրավունքների խախտումների դեպքերը:*[14]

Իրավախախտումների հետևանքով ոտնահարվել են տուժածների՝ խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, ազատության, արտահայտվելու, հավաքների, աշխատանքի, կրթության և մի շարք այլ իրավունքներ: Իրավախախտների գործողությունների արդյունքում հաճախ խախտվել են տուժողների միաժամանակ մի քանի իրավունքներ:

13 Տե՛ս Identoba and Others v. Georgia, 2015, § 96; Salgueiro da Silva Mouta v. Portugal, 1999, § 28; Fretté v. France, 2002, § 32; Vejdeland and Others v. Sweden, 2012, § 55; Committee Against Torture, General Comment No.2: Implementatiol of Article 2 by State parties, § 21, 22.
14 Հանրային հարթակներում, սոցիալական ցանցերում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի դրսևորումները ներառված չեն իրավախախտումների մեջ, դրանք զետեղված են սույն զեկույցի 2-րդ գլխում:

Սույն զեկույցում ներառված ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավախախտումները հանդիսանում են ՍԿԳԻ-ի հիմքով խտրականությունից զերծ լինելու իրավունքի ոտնահարման դեպքեր՝ զուգորդված մարդու իրավունքների այլ տեսակների ոտնահարմամբ: Այդ իրավախախտումների արձանագրումը և դիտարկումն ունի նույնական կարևորություն՝ առանց որևէ մեկի գերակայության: Զեկույցի բաժիններում ներկայացված դեպքերը խմբավորվել են մարդու իրավունքների խախտումները որոշ տեսակները մատնանշելու ու շեշտադրելու համար: Հասկանալի է, որ դեպքերից յուրաքանչյուրը հանդիսանում է մեկից ավել մարդու իրավունքների ոտնահարում՝ չնայած զեկույցում կարող է ներկայացված լինել մարդու իրավունքների խախտումների բաժիններից մեկում: Մի դեպքը կարող է ներառված լինել նաև մարդու իրավունքների խախտման մեկ այլ տարանջատված բաժնում:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 31

Յուրաքանչյուր անձ ունի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:[15] Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:[16] «Անձնական կյանքը» լայն հասկացություն է. ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպի-սին են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:[17]

Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը անձի հիմնարար, անքակտելի իրավունքներից մեկն է և մարդու արժանապատվության անբաժան մասը, որի պատշաճ պաշտպանությունը պետության ժողովրդավարության անհրաժեշտ նախապայմանն է: Այն պաշտպանվում է նաև խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի անթույլատրելիության ներքո:

Խոշտանգումը բնութագրվում է որպես ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով:[18]

15 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 31:
16 Տե՛ս International Covenant on Civil and Political Rights, 1966, Article 16.
17 Տե՛ս Pretty v. The United Kingdom, No. 2346/02, §49.
18 Տե՛ս Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 1984, Article 1.

Վերջինս պաշտպանելու միջազգային պարտավորության ներքո պետությունը պետք է նախ զերծ մնա անձանց խոշտանգելուց: Պետական այրերը, իրավապահ մարմինների ծառայողները, պետական լիազորությամբ օժտված անձինք չպետք է ֆիզիկական կամ մտավոր բռնության ենթարկեն մասնավոր անհատներին՝ նրանց խտրականությունից պաշտպանվող որևէ հատկանիշի հիման վրա: Անհրաժեշտ է նաև ամրագրել, որ խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման:[19]

Փորձելով տարբերակել խոշտանգումը անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից՝ պետք է նշել, որ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որն անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ,[20] իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:[21] Որոշ դեպքերում ՍԿԳԻ հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք է համարվում:[22]

Այնուամենայնիվ, խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը միայն պետական ծառայողների վրա չի տարածվում: Պետությունը քննարկվող իրավունքի պաշտպանության միջազգային պարտավորությունների ներքո պետք է կանխարգելի այլ անձանց կողմից մյուսների ֆիզիկական ապահովության խախտումը,[23] թույլ չտա ֆիզիկական ոտնձգությունների իրականացումը՝ ծեծը, առողջությանը վնաս պատճառելը, հարվածելը, դանակահարելը, այլ ներգործությունը անձի մարմնի նկատմամբ: Միևնույն ժամանակ պետությունը պետք է մեխանիզմներ ստեղծի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտումը վերացնելու համար: Այդպիսի մեխանիզմներից կարող են լինել համապատասխան գործողությունների քրեականացումը, տուժողին պատճառված վնասի դիմաց տրվող փոխհատուցումը:[24]

Անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը պաշտպանվում է նաև մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի ներքո:[25] Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ մասնավոր անհատների ոտնձգություններից անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ իշխանություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ որոշ դեպքերում ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածների, մյուս դեպքերում՝ 8-րդ հոդվածի (առանձին կամ 3-րդ հոդվածի համակցությամբ) ներքո՝ ստեղծել և ապահովել իրավական նորմերի պատշաճ շրջանակ, որը թույլ կտա պաշտպանել մասնավոր անձանց կողմից բռնի գործողու-

19 Տե՛ս Pretty v. The United Kingdom, No. 2346/02, §4.
20 Տե՛ս Aydin v. Turkey, No23178/94.
21 Տե՛ս East African Asians v United Kingdom, No 4715/70, 4783/71, 4827/71.
22 Տե՛ս Smith and Grady v United Kingdom, No 33985/96, 33986/96.
23 Տե՛ս CAT, General comment No. 3. A v United Kingdom, No. 25599/94, Rep. 1996-VI, judgement of 23 September 1998.
24 Տե՛ս Blanco Abad v Spain, CAT Communication No. 59/1996, 14 May 1998, Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses v Georgia, op. cit., §97. CAT, General comment No. 2.; Torture in International Law, a guide to jurisprudence, Association for the Prevention of Torture, page 72.
25 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 31.

թյուններից:[26]

ՀՀ-ում անձին դիտավորությամբ ֆիզիկական վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության մեխանիզմները նախատեսվում են ՀՀ քրեական օրենսգրքով:[27] Վերջինս պատիժ է սահմանում տարբեր աստիճանի վտանգավորության և տարբեր տեսակի վնասներ պատճառող ֆիզիկական ներգործության հանցանքների համար:

Ֆիզիկական բռնության դեպքեր

2020 թ. ընթացքում կազմակերպության կողմից գրանցվել է ֆիզիկական բռնության 18 դեպք:[28] Արձանագրված դեպքերում ԼԳԲՏ կամ ասոցացված անձանց հարվածել են ձեռքերով, ոտքերով, նրանց քաշքշել են, ապտակել, քաշել մազերից՝ նրանց առողջությանը պատճառելով տարբեր տեսակի վնասվածքներ: Ստորև ներկայացված են ֆիզիկական բռնություն գործադրելու դեպքերից մի քանիսը:

Տրանս կնոջը մոտեցել է մի երիտասարդ տղամարդ և ծաղիկ նվիրել: Կինը վերցրել է այդ ծաղիկը՝ մտածելով, որ դա դրական վերաբերմունքի նշան է: Սակայն տղամարդը հարվածել է տուժողին: Տուժողը փորձել է փախչել և նստել իրեն նախորդիվ ծառայություն մատուցած տաքսի մեքենան, որը սպասում էր փողոցի վրա: Նստելով տաքսի՝ նա վարորդին խնդրել է հեռանալ այդտեղից, սակայն վարորդը հայտնել է, որ չի ճանաչում իրեն և պահանջել է իջնել մեքենայից: Այդ ընթացքում բռնարարը և նրա հետ ևս 3-4 տղա շարունակել են հարվածել տուժողին, այդ թվում՝ մեքենայի մեջ, քանի որ մեքենան կանգնած է եղել, և լուսամուտը փակված չի եղել: Տուժողը դուրս է եկել մեքենայից որոշ ժամանակ անց և հեռացել այդ տարածքից: Տուժողի հասցեին բռնության ընթացքում և հեռանալիս հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ: Ծեծի հետևանքով և փախչելու ընթացքում տուժողը կորցրել է պայուսակը, կոշիկները և կեղծամը:

2020 թ. սեպտեմբերին դիմողը իր ընկերներից մեկի հետ քայլելիս է եղել Հյուսիսային պողոտայով, երբ նստարաններից մեկին նստած երիտասարդ տղայից լսել է արտահայտություններ. «Սրանց տեսեք, սրանց նմանները չպետք ա լինեն, սրանց նմանները հայ չեն» և այլն: Դիմողի կարծիքով՝ այդ արտահայտությունները պայմանավորված են եղել իր և ընկերոջ արտաքին տեսքով. իր մազերը վարդամանուշակագույն են, ձեռքին ունի դաջվածք, ինչպես նաև այդ պահին ծխում էր, իսկ ընկերոջ, ով տղա է, մազերը ուսերին հասնող երկարության են: Դիմողը վիրավորական արտահայտություններ անողին ցույց է տվել իր միջնամատը, ինչից հետո տղամարդը սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել: Դիմողի կողմից նույնանման պատասխանի արժանանալուց հետո

26 Տե՛ս Osman v. the United Kingdom, §§ 128-130; Bevacqua and S. v. Bulgaria, § 65; Sandra Janković v. Croatia, § 45; A v. Croatia, § 60; Đorđević v. Croatia, §§ 141-143; Söderman v. Sweden [GC], § 80.
27 Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 16. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149259
28 Ներկայացված թվի մեջ ներառված են սեռական բռնության դեպքը, ինչպես նաև ընտանեկան բռնության 11 դեպքերը, որոնցով տուժողները ֆիզիկական ներգործության են ենթարկվել, բացառությամբ ընտանիքում ազատությունից զրկելու դեպքի:

տղամարդը մոտեցել է և ոտքով հարվածել դիմողի որովայնի հատվածում, ինչի հետևանքով դիմողը վայր է ընկել: Տղամարդը մոտեցել է, որպեսզի նորից հարվածի, սակայն դիմողի ընկերը և այդ պահին հարվածողի հետ գտնվող մի կին նրան թույլ չեն տվել: Հարվածողը շարունակել է վիրավորանքներ և սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնել: Դիմողը միացրել է հեռախոսը և տեսանկարահանել հանցավորին՝ իր նկատմամբ հետագա բռնությունը կանխելու նպատակով: Հանցավորը փորձել է վերցնել հեռախոսը և սպառնացել կոտրել այն: Վիճաբանությունից հետո դիմողը հեռացել է այդ տարածքից:

Տրանս կինը մատուցում է վճարովի սեռական ծառայություններ: 2020թ. հուլիսին նա հաճախորդի հետ գտնվել է իր տանը: Սեռական հարաբերություններ ունենալուց հետո՝ գիշերը՝ մոտ ժամը 2-ին, երբ հաճախորդը լոգանք է ընդունել և պատրաստվել է հեռանալ, վերջինս տան միջանցքում մեկ անգամ ձեռքով հարվածել է դիմողին, ինչից հետո դիմողը վայր է ընկել: Հաճախորդը սկսել է ոտքերով հարվածներ հասցնել դիմողին ընկած վիճակում: Դիմողը ստացել է վնասվածքներ դեմքի, կողոսկրերի շրջանում:

2020թ. հունիսին դիմողը քայլելիս նկատում է, որ իր գնահատմամբ ոչ ադեկվատ վիճակում գտնվող (ալկոհոլային կամ թմրանյութի ազդեցության տակ) մի տղամարդ քաշքշում է տրանս կնոջ: Դիմողը մոտենում է և փորձում կանգնեցնել վիճաբանությունը: Տղամարդը հարցնում է՝ արդյոք դիմողն էլ է տրանս, ինչին ի պատասխան դիմողը հայտնում է, որ գեյ է: Տղամարդը դրանից բարկանում է, ասում. «Քեզ կասեմ հեսա», հանում է դանակը, որ վնասի դիմողին: Բռնարարը սպառնալիքներ հնչեցնելու և հայհոյելու ընթացքում հայտնում է, որ ոստիկանության աշխատակից է և որ կկարողանա գումարով ազատվել քրեական պատասխանատվությունից: Դիմողը իր մոտ գտնվող էլեկտրահարող սարքի միջոցով կարողանում է պաշտպանվել, ինչպես նաև սկսում է տեսանկարահանել բռնությունը՝ հետագայում ոստիկանությանը ներկայացնելու համար: Դրանից հետո բռնարարը հեռանում է:

2020 թ. հոկտեմբերին տրանս կինը գտնվել է Երևան քաղաքի Անգլիական այգու հարևանությամբ: Նրան է մոտեցել անծանոթ տղամարդը իր ավտոմեքենայով: Կինը պայմանավորվել է սեռական ծառայություններ մատուցել տղամարդուն որոշակի գումարի դիմաց: Նա նստել է անծանոթի մեքենան, մեքենան անցել է մի քանի մետր և կանգնել: Անծանոթ տղամարդը տեղեկացել է, որ սեռական ծառայություններ մատուցողը տրանս անձ է, պահանջել է իր հետ սեռական հարաբերություններ ունենալ անվճար: Կինը չի համաձայնվել, պահանջել է իրեն վերադարձնել այն տարածք, որտեղից նստել էր մեքենան: Տղամարդը հրաժարվել է, բռունցքով հարվածել կնոջ դեմքին, այնուհետև մի քանի անգամ ևս ձեռքով հարվածել դեմքին, կնոջ գլուխը դիպել է մեքենայի լուսամուտին: Տղամարդը դուրս է եկել մեքենայից, բացել կնոջ դուռը, կինը ընկել է գետնին, ինչից հետո տղամարդը շարունակել է ձեռքերով և ոտքերով հարվածել նրա մարմնի տարբեր հատվածներին՝ ձեռքերին, ոտքերին, մեջքին:

Արձանագրված դեպքերից յուրաքանչյուրում բռնարարը կամ բռնարարները դիտավորությամբ խախտել են ԼԳԲՏ անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը: Վերջիններիս ծեծել են, գործադրել են տարբեր տեսակի բռնություն՝ նպատակ ունենալով նվաստացնելու տուժողներին և ցույց տալու իրենց գերակայությունը ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Բռնության հետևանքով տուժողները զգացել են ֆիզիկական ցավ, ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Ֆիզիկական բռնությունը ուղեկցվել է հայհոյանքներով, վիրավորանքներով, տուժողների արժանապատվությունը նվաստացնող այլ արտահայտություններով: ՍԿԳԻ նկատմամբ վիրավորական արտահայտությունների օգտագործումը հանցավորների կողմից ցույց է տալիս, որ ոտնձգությունը իրականացնելիս նրանց առաջնորդել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության, խտրականության շարժառիթը:

Այս գործողությունների արդյունքում խախտվել են տուժած անձանց խոշտանգումներից, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքները: Ճիշտ է՝ այս գործողությունները չեն իրականացվել պետական մարմինների աշխատակիցների կողմից, իսկ պետության նեգատիվ պարտականության՝ քննարկվող իրավունքը խախտելուց զերծ մնալու իրականացումը չի ձախողվել: Այնուամենայնիվ, պետությունը ձախողել է ԼԳԲՏ անձանց՝ իրենց ֆիզիկական անձեռնմխելիո-թյան ազատությունը իրացնելու համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը, քանի որ չի կանխարգելել մասնավոր անձանց կողմից նրանց նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերը:

Ընտանեկան բռնության դեպքեր

2017թ. ՀՀ-ում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը (այսուհետ՝ Ընտանիքում բռնության կանխարգելման մասին օրենք): Թվում էր, թե դրա գործարկումից հետո ԼԳԲՏ անձինք իրենց ընտանիքներում ավելի պաշտպանված կլինեն, բայց իրականում մինչ օրս ընտանիքում բռնության ենթարկվելու խնդրով «Փինք» ՀԿ-ին են դիմում բազում անձինք: 2020 թ. ընթացքում կազմակերպության կողմից արձանագրվել է ընտանիքում բռնության 17 դեպք:

Ընտանեկան բռնության ենթարկվածներից 6-ը լեսբի կամ երկսեռական կանայք են, 8-ը՝ գեյ կամ երկսեռական տղամարդիկ, 3-ը՝ տրանս անձինք: Բռնությունից տուժած անձանցից 6-ը եղել են անչափահաս:

Նույնասեռական անչափահաս տղայի ծնողները, նրա սեռական կողմնորոշման մասին իմանալուց ի վեր պարբերաբար ստուգել են նրա հեռախոսային նամակագրությունները, հետևել զանգերին, ստիպել չշփվել ընկերների հետ, որոնք նույնպես հանդիսանում են ԼԳԲՏ անձինք և հաճախակի գործադրել են բռնություն: Անձը փախուստի է դիմել տնից և ապաստարան հայցել իր ընկերներից:

Որոշ դեպքերում, եթե անձին որոշակի հոգեկան և ֆիզիկական տառապանք է պատճառվել, որը պարբերական բնույթ է կրում, կարող է միաժամանակ ոտնահարվել նրա ոչ միայն մասնավոր, ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այլև՝ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը:

Դիմողները հայտնել են ընտանիքում բռնության տարբեր տեսակների մասին՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական: Այս տեսակները մեծամասամբ համակցվել են. ֆիզիկականը՝ հոգեբանականի հետ, հոգեբանականը՝ տնտեսականի հետ:

Արձանագրված դեպքերից երկուսում ընտանիքի անդամները նաև ստիպել են տուժողներին այցելել բժիշկ կամ հոգեբան մասնագետի՝ փոխելու նրանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Սույն պրակտիկաները հայտնի են որպես կոնվերսիոն պրակտիկայի կամ կոնվերսիոն թերապիայի դեպքեր:[29]

Արձանագրված 17 դեպքերից 12-ով ԼԳԲՏ անձինք ենթարկվել են **ֆիզիկական բռնության**: Ֆիզիկական բռնությունը դրսևորվել է ծեծով, իրերով հարվածելով, ազատությունից զրկելով և այլ եղանակներով:

Դիմողի ծնողները, տեղեկանալով նրա սեռական կողմնորոշման մասին, սկսել են նրան ճնշումների ենթարկել: Նրանք դիմողին տարել են սեքսոլոգի մոտ, ով նրանց տեղեկացրել է, որ նույնասեռականությունը հիվանդություն չէ: Վերադառնալու ճանապարհին դիմողի հայրը իջել է մեքենայից և սկսել հարվածել դիմողին, ինչի արդյունքում դիմողի շրթունքը վնասվել է, մարմնի տարբեր մասերին առաջացել են կապտուկներ: Նա կարողացել է մի կերպ դուրս գալ մեքենայից, իսկ երբ հոր բարկությունն անցել է, նրանք վերադարձել են տուն: Հետագայում ևս դիմողի նկատմամբ գործադրվել է հոգեբանական բռնություն, ինչի պատճառով նա որոշել է հեռանալ ընտանիքից և բնակվել առանձին:

Նույնասեռական տղամարդու հայրը տեսել է նրա լուսանկարները համացանցում, որտեղ նա՝ որպես մոդել, մասնակցել է հագուստի բրենդի նկարահանումներին: Այդ լուսանկարները համացանցում տարածվել են խտրական, ատելություն և բռնության կոչեր պարունակող մեկնաբանություններով՝ լուսանկարի անձանց նույնականացնելով որպես ԼԳԲՏ անձինք: Տղամարդու հայրը ֆիզիկական բռնության է ենթարկել նրան, ծեծել է, քանի որ նրա կարծիքով իր որդու նույնասեռական լինելը և այդ հանգամանքը հասարակության շրջանում հայտնի դառնալը արատավորում է իր և ընտանիքի պատիվը: Անձը ստիպված է եղել հեռանալ տնից և տեղափոխվել այլ քաղաք, որովհետև նրա հայրը սպառնացել է, որ հրազենով գլխին կրակելու միջոցով կսպանի նրան, եթե գտնի:

Արձանագրված դեպքերից գրեթե բոլորով՝ 16 դեպքով, կազմակերպությանը դիմած անձինք հայտնել են ընտանիքի կողմից իրենց նկատմամբ գործադրված

29 Տե՛ս «Կոնվերսիոն պրակտիկաների և թերապիաների իրականացման մասին ուսումնասիրություն Հայաստանում», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2019թ. https://www.pinkarmenia.org/news/conversion-therapy/

հոգեբանական բռնության մասին: Նրանց վիրավորել են, ծաղրել են՝ կապված իրենց ՍԿԳԻ հետ, սպառնացել են, որ ֆիզիկական բռնություն կգործադրեն, թույլ չեն տա հաճախել դպրոց, կզրկեն ընկերների հետ շփումից, ընկերների ընտանիքի անդամներին կբացահայտեն նրանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Մեկ դեպքով էլ շարունակական հոգեբանական ճնշումները նույնասեռական կնոջը հասցրել են ինքնասպանության փորձի:

Բիսեքսուալ կնոջ մայրը կարդացել է նրա անձնական նամակագրությունը զուգընկերուհու հետ, տեղեկացել է իր դստեր նույնասեռ հարաբերությունների մասին: Դրանից հետո մայրը ծեծի է ենթարկել դիմողին, սպառնացել, որ կհրապարակի նրա և զուգընկերուհու ինտիմ լուսանկարները, բոլորին կտեղեկացնի նրանց հարաբերությունների և սեռական կողմնորոշման մասին՝ նրանց պատիվը արատավորելու համար: Մայրը դուստրից պահանջել է ուղղվել և բուժվել, սպառնացել, որ հոգեբույժներին կկանչի, ինչպես նաև պահանջել է հեռանալ տնից: Սակայն տուժողը չի աշխատում և բնակվելու այլ վայր չունի, ուստի իր 2 անչափահաս երեխաների հետ չի կարողացել հեռանալ: Տուժողի մայրը կապ է հաստատել նաև նրա զուգընկերուհու հետ, նրան ևս սպառնացել, որ կտարածի լուսանկարները, նրա սեռական կողմնորոշման մասին կտեղեկացնի նրա ընտանիքի անդամներին և հարազատներին: Մի քանի օր անց տուժողը ստիպված է եղել հեռանալ տնից և ժամանակավորապես բնակվել այլ վայրում:

Դիմողի ծնողները կասկածներ են ունեցել նրա նույնասեռականության վերաբերյալ, ինչի պատճառով բարկացել են նրա վրա, ամոթանք տվել, սպառնացել, որ թույլ չեն տա շփվել ընկերների հետ կամ հաճախել դպրոց, կզրկեն կապի միջոցներից, սկսել են նաև վերահսկողություն իրականացնել նրա գործողությունների և շփումների նկատմամբ: Դիմողի խոսքերով՝ այդ շարունակական մթնոլորտը այնքան ճնշող է եղել, որ ինքն անգամ փորձել է ինքնասպանություն գործել:

Դեպքերից 3-ով դիմողներին ենթարկել են **տնտեսական բռնության**. զրկել են կապի միջոցներից՝ հեռախոսից, համակարգչից, թույլ չեն տվել օգտվել զուգարանից և սպասքից:

Նույնասեռական տղամարդը իր սեռական կողմնորոշումը բացահայտել է մորը, ինչից հետո նրա հարաբերությունները լարվել են ծնողների հետ: Ընտանիքում պարբերաբար վիճաբանություններ են տեղի ունեցել՝ կապված դիմողի կողմնորոշման հետ: Եղել է, որ նրան փակել են սենյակում, ասել են, որ չօգտվի լվացարանից, չդիպչի բաժակներին, քանի որ կարծել են՝ նույնասեռականության հետևանքով սեռավարակներ ունի: Նրա հասցեին պարբերաբար հնչեցրել են վիրավորական արտահայտություններ՝ տեսքի առումով անվանելով «կնիկ», հայհոյել են՝ ասելով «գյոթ»: Եղել են նաև ֆիզիկական բռնության դեպքեր. դիմողին հարվածել են ձեռքերով:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնություն են գործադրել նրանց մայրերը, հայրերը, որոշ դեպքերում ընտանիքի մյուս անդամները՝ քույրը, եղբայրը, տատը:

Դիմողը նույնականանում է որպես տրանս կին: Նա հայտնում է, որ իր ընտանիքի անդամները՝ մայրը և հայրը, իրեն պարբերաբար ենթարկել են ֆիզիկական բռնության՝ հարվածել են, ծեծել են, ինչպես նաև հոգեբանական բռնության՝ վիճաբանել են և վիրավորել՝ կապված դիմողի ինքնության հետ, սպառնացել են, որ «կզրկեն ամեն ինչից»: Ծնողները պարտադրել են դիմողին այցելել հոգեբանի՝ նրա գենդերային ինքնությունը «փոխելու» նպատակով: Հոգեբանի հետ հանդիպումները տեղի են ունեցել շաբաթական 3 անգամ հեռավար ձևաչափով (օնլայն): Դիմողը հոգեբանից օգնություն է խնդրել, հայտնել, որ ցանկանում է փոխել սեռը, սակայն հոգեբանը որևէ աջակցություն չի տրամադրել: Մի քանի օր անց, երբ դիմողը այցելել է իր եղբոր տուն, եղբայրը վիճաբանել է նրա հետ, հարվածել նրան: Դիմողը ստիպված է եղել փակվել սենյակում, որպեսզի իրեն նորից չծեծեն:

Ընտանիքում բռնության կանխարգելման մասին օրենքը բռնության սուբյեկտի որոշման հիմքում դնում է ընտանիքի գաղափարը: Ըստ այդ օրենքի՝ ընտանիքի անդամներ կարող են լինել այնպիսի անձինք, որոնք միմյանց հետ թեև արյունակցական կապ չունեն, սակայն բնակվում են միասին: Ուստի և՛ օրենքով,[30] և՛ գործնականում անձի քրոջ ամուսինը համարվում է ընտանիքում բռնության սուբյեկտ: Անձի քրոջ ամուսնու կողմից բիսեքսուալ տղամարդու նկատմամբ բռնության դեպք նույնպես արձանագրվել է հաշվետու տարվա ընթացքում:

Բիսեքսուալ տղամարդը բնակվում է իր քրոջ ընտանիքի՝ ամուսնու, ամուսնու մոր, իր մոր հետ: Քրոջ ամուսինը, կասկածներ ունենալով նրա սեռական կողմնորոշման մասին, վիրավորական ակնարկներ է հնչեցրել և ծաղրել տուժածին կապված նրա սեռական կողմնորոշման հետ, իր երեխաներին խորհուրդ է տվել չշփվել տուժածի հետ: 2020թ. հունիսին տուժածի քրոջ ամուսինը ծեծի է ենթարկել տուժածին՝ նրա հասցեին հնչեցնելով սեռական բնույթի հայհոյանքներ կապված վերջինիս սեռական կողմնորոշման հետ: Տուժածը փախել է իր սենյակ, սակայն բռնարարը այլ դռնով մուտք է գործել այդ սենյակ, փորձել նրան խեղդել և սպառնացել խեղել նրան և սպանել:

Արձանագրված դեպքերում բռնությունը գործադրվել է այն բանից հետո, երբ ԼԳԲՏ անձանց ընտանիքի անդամները տեղեկացել կամ կասկածել են նրանց ՍԿԳԻ մասին: Իսկ այդ տեղեկատվությունը ընտանիքի անդամներին հայտնի է դարձել տարբեր հանգամանքներում՝ տուժածների անձնական նամակագրությունը ընթերցելուց, սեռական կողմնորոշման հիմքով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուց հետո, տուժածների ընկերների միջոցով և այլն: ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության գործադրումը ընտանիքի անդամ-

30 ՀՀ օրենքը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին», հոդված 4, 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672

ների կողմից կրել է շարունակական ու տևական բնույթ:

Նույնասեռական տղամարդու մայրը և եղբայրը տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին այն բանից հետո, երբ զինվորական ծառայության հանձնաժողովը տեղեկացել է իր նույնասեռական լինելու մասին՝ զինվորական ծառայության պիտանելիության հարցը քննելիս: Դրանից հետո նրա նկատմամբ սկսվել են ճնշումներ: Եղբայրը ֆիզիկական բռնության է ենթարկել, նվաստացրել և վիրավորել նրան: Տղամարդը որոշել է հեռանալ և առանձին ապրել, քանի որ ընտանիքի հետ համատեղ ապրել այլևս չի կարողացել, բացի այդ՝ դա պահանջել են նաև ընտանիքի անդամները:

Ընտանիքում բռնության կանխարգելման մասին ՀՀ օրենքը ընդունվել է ապահովելու համար ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացումը: Տարբեր միջազգային մարմիններ, որոնց դիրքորոշումները պետք է հաշվի առնվեն ՀՀ պետական մարմինների կողմից մարդու իրավունքների մեկնաբանման ժամանակ, նշել են ընտանեկան բռնության դեմ պայքարի կարևորությունը: Մասնավորապես՝ ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 1582 (2002) հանձնարարականը անդամ երկրներին առաջարկում է որոշակի միջոցառումներ ձեռնարկել ընտանիքում բռնությունը կանխարգելելու համար, ինչպիսիք են ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրության բարելավումը, դրա բնույթի ու տարածվածության վերաբերյալ հստակ պատկերի մշակումը, ընտանեկան բռնության դեմ իրազեկման ազգային արշավների մեկնարկը լրատվամիջոցներով, գենդերային հավասարության վերաբերյալ հասարակությանը կրթելը, և այլն: ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան», վավերացված չլինելով ՀՀ կողմից,[31] խորհրդատվական դեր ունի պետության համար: Այն նույնպես սահմանում է որոշակի գործողություններ, որոնք պետությունները պետք է ձեռնարկեն կանխարգելելու ընտանեկան բռնությունը, պաշտպանելու բռնության ենթարկված անձանց և քննության առնելու ընտանեկան բռնության դեպքերը:[32]

Փինքի կողմից արձանագրված դեպքերի ծավալը ցույց է տալիս, որ ՀՀ-ն ձախողել է ընտանեկան բռնության դեմ պայքարում իր ստանձնած պարտավորությունները. այն չի կարողացել ստեղծել այնպիսի իրավական և հասարակական միջավայր, որում ԼԳԲՏ անձինք ապահով կլինեն իրենց ընտանիքներում: Ոչ խտրական միջավայրի բացակայությունը հանգեցրել է ԼԳԲՏ անձանց ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, տնտեսական իրավունքների, խտրականությունից զերծ լինելու իրավունքի ոտնահարման ընտանիքի անդամների կողմից:

31 ՀՀ-ի կողմից կոնվենցիան ստորագրվել է 2018 թվականին, սակայն դեռ չի վավերացվել:
32 Տե՛ս Article 1, Article 4 (3), Article 55 of Convention on preventing and combating violence against women and domestic violence.

Սեռական բռնության դեպք

Անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը ներառում է նաև սեռական անձեռնմխելիությունը, այսինքն՝ սեռական անհասանելիությունը, սեռական ազատությունը: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր անձ ազատ է որոշումներ կայացնելու իր սեռական կյանքի վերաբերյալ: Նրա հետ ցանկացած կերպով՝ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, համոզելով, հարկադրելով, անօգնական վիճակն օգտագործելով, առանց նրա համաձայնության և նրա կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալն անթույլատրելի է:

2020 թ. ամռանը տղամարդը (բռնարարը), տեղյակ լինելով նույնասեռական 2 անձանց սեռական կողմնորոշման և միմյանց հետ հարաբերությունների մեջ գտնվելու մասին, առաջարկել է նրանց միասին ալկոհոլ օգտագործել: Այնուհետև տարել է իր սենյակ, կողպել սենյակի դուռը, պահանջել կամ սեռական հարաբերություններ ունենալ միմյանց հետ կամ իր հետ, քաշքշել և սպառնացել է նրանց դանակով: Տուժողները, որոշակիորեն գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, վախենալով դիմադրել բռնարարին, համաձայնել են միմյանց հետ սեռական հարաբերություն ունենալ՝ դրանով փորձելով խուսափել բռնարարի հետ սեռական կապի մեջ մտնելուց: Սակայն դրանից հետո բռնարարը բաց չի թողել նրանց, և նրանցից յուրաքանչյուրին բռնության սպառնալիքի ներքո ստիպել է իր հետ օրալ սեռական հարաբերություն ունենալ:

Սույն դեպքում խախտվել է 2 նույնասեռական տղամարդկանց սեռական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, նրանց ֆիզիկական և հոգեբանական առողջությանը պատճառվել է վնաս հանցավորի ապօրինի գործողությունների արդյունքում: Հանցավոր ոտնձգությունը տեղի է ունեցել առանց տուժողների համաձայնության, նրանց կամքին հակառակ, բռնություն գործադրելով՝ նրանց հրելով, նրանց դանակով վնասելու, հարվածելու սպառնալիքի ներքո, ինչպես նաև օգտվելով նրանց ալկոհոլային հարբածության վիճակում գտնվելու հանգամանքից: Հատկանշական է, որ այս գործով դիմողները ի սկզբանե չեն ցանկացել դիմում ներկայացնել ոստիկանությանը՝ վախենալով իրենց անձնական տվյալների բացահայտումից, իրենց սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկատվության տարածումից: Սակայն, ի վերջո դիմել են իրավապահ մարմիններին՝ հույս ունենալով վերականգնել իրենց խախտված իրավունքները և կանխելու համար հանցավորի կողմից նոր ոտնձգությունները: Այնուամենայնիվ, քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով, իսկ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը քննության առարկա չի դարձվել:

Բռնություն գործադրելու իրական վտանգի, սպառնալիքների և կոչերի դեպքերը

Ֆիզիկական անձեռնմխելիության բաղկացուցիչ մասն է ֆիզիկական ոտնձգության ենթարկվելու ռիսկի բացակայությունը. պետության կողմից պետք է ստեղծվի այնպիսի միջավայր, որտեղ ԼԳԲՏ անձանց չեն սպառնա նրանց նկատմամբ հաշվեհարդար տեսնել, չեն իրականացվի նախապատրաստական գործողություններ, օրինակ՝ խումբ կազմելը, զենք ձեռք բերելը, նույնասեռական կամ տրանս անձանց գտնվելու վայրերում դարանակալելը՝ ԼԳԲՏ անձանց վնասելու համար: Կազմակերպության կողմից արձանագրվել են նաև ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքների, իրական վտանգի դեպքեր:

2020 թ. գարնանը տրանս կինը զինվորական հագուստով շպարված, բարձրակրունկների վրա պարելու երաժշտական տեսանյութ է հրապարակել սոցիալական ցանցերից մեկում: Տեսանյութում երևում է նաև ծիածան դրոշը: Տեսանյութը լայն տարածում է գտել համացանցում, ինչից հետո անձը սպանության և իր նկատմամբ բռնություն գործադրելու բազմաթիվ սպառնալիքներ է ստացել:

2020 թ. արձանագրվել են նաև բռնության կոչեր՝ պայմանավորված անձանց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ:[33]

2020 թ. հունիսի վերջին Երևան քաղաքում տեղի է ունեցել նորաստեղծ բրենդի հագուստի հավաքածուի ցուցադրություն և ֆոտոնկարահանում: Անցորդներից մեկը լուսանկարել է* հագուստը կրող մոդելներին և տեղադրել լուսանկարը սոցցանցի իր էջում՝ նրանց նույնականացնելով որպես ԼԳԲՏ անձինք և վիրավորական արտահայտություններ գրելով նրանց հասցեին: Նրանց՝ որպես ԼԳԲՏ անձ նույնականացնելը, պայմանավորված է եղել նրանց կրած հագուստներով և նրանց տարբերվող արտաքինով, օրինակ՝ մոդելներից մեկը բավականին կարճ մազերով աղջիկ էր, տղաները ծալել էին իրենց տաբատները մինչև ազդրերի վերևի հատվածները:

Դրանից հետո մեծամասշտաբ լսարան ունեցող տարբեր անձինք տարածում են այդ լուսանկարը, մոդելների հասցեին հնչեցնում վիրավորանքներ, բռնության կոչեր, նման կոչեր են հնչեցվում նաև հրապարակումների մեկնաբանություններում: Այդ կոչերը վերածվում են ընդհանուր ԼԳԲՏ համայնքի նկատմամբ բռնության և անհանդուրժողականության կոչերի:



*(*Անցորդի կողմից արված լուսանկարը)*

33 Արձանագրված բռնության կոչերին առավել ծավալուն անդրադարձ է կատարված սույն զեկույցի 2-րդ մասում:

Չնայած ՀՀ-ն ամրագրում է անձի՝ կարծիքի արտահայտման ազատության իրավունքը,[34] այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված որոշակի դեպքերում այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սա նշանակում է, որ պետությունը կարող է անձին թույլ չտալ ազատորեն արտահայտելու իր կարծիքը, կիսվելու իր մտքերով, եթե դրանով անձը վիրավորում, նվաստացնում, զրպարտում է մյուսներին, սպառնալիքներ կամ բռնության կոչեր է հնչեցնում այլ անձանց նկատմամբ կամ այլ կերպ խախտում է մյուսների իրավունքները: Նկարագրված դեպքերում տարբեր անձանց հնչեցրած, հրապարակային արտահայտությունները դուրս են գալիս կարծիքի արտահայտման ազատության շրջանակներից, քանի որ դրանք խախտում են այլոց իրավունքները և ազատությունները,[35] մասնավորապես՝ անձանց՝ մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը:

Անձնական տվյալների ապօրինի բացահայտման դեպքեր

Անձն ունի իրեն վերաբերող անձնական տվյալների պաշտպանության իրավունք:[36] Որպես անձնական տվյալներ պետք է հասկանալ բոլոր այն տեղեկությունները, որոնց միջոցով հնարավոր է նույնականացնել անձին՝[37] նրա անձնագրային տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, առողջության և անձնական կյանքի հետ կապված այլ տվյալները: Ընդ որում, եթե անգամ նշված տեղեկատվությունն արդեն իսկ հրապարակված է հանրային տիրույթում, չի նշանակում, որ քննարկվող իրավունքի պաշտպանությունը չեղարկված է:[38] Անձնական տվյալների հավաքագրումը, պահպանումը, օգտագործումը կամ հրապարակումը թույլատրվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում, իսկ նման տվյալների ապօրինի տարածումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:[39]

Կազմակերպության կողմից արձանագրվել են անձնական տվյալների բացահայտման դեպքեր:

Բազմահազարանոց լսարան ունեցող ֆեյսբուքյան օգտատերը ֆեյսբուքի իր պատին հրապարակել է տրանս անձի անձնագրային տվյալները ծաղրական մեկնաբանությամբ: Հրապարակումը լայն արձագանք է ստացել մեդիայում, տրանս անձի նկատմամբ հնչել են բազմաթիվ վիրավորական մեկնաբանություններ:

34 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 42:
35 Առավել մանրամասն անդրադարձ է կատարված սույն զեկույցի 2-րդ գլխում:
36 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 34:
37 Տե՛ս ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», հոդված 3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=132745
38 Տե՛ս Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland [GC], § 134.
39 Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 144, 145:

Նույնասեռական անձի գործատուն առանց նրա համաձայնության մուտք է գործել նրա հեռախոսի հաղորդագրությունների բաժին, որտեղ կարդացել է նրա և զուգընկերոջ անձնական զրույցը: Գործատուն անձի սեռական կողմնորոշման մասին հայտնել է կազմակերպության այլ աշխատակիցների, որոնք սկսել են դրա վերաբերյալ ակնարկներ անել:

Նույնասեռական կնոջ հայրը, փորձելով խոչընդոտել իր դստեր և նրա ընկերուհու շփումը, վերջինիս ծնողներին հայտնել է, որ նրանց դուստրը լեսբի է և որ հաճախում է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանություն իրականացնող հասարակական կազմակերպությունների գրասենյակներ: Տուժածը ստիպված է եղել ժխտել այդ տեղեկատվությունը՝ ընտանեկան վիճաբանությունից խուսափելու համար:

Տրանս կնոջ զուգընկերուհին (նույնպես տրանս կին) հեռախոսով նկարահանել է նրան կնոջ հագուստով և դիմահարդարմամբ (տրանս ինքնությամբ): Հետագայում այդ նկարները փոխանցել է դիմողի համագյուղացուն: Վերջինս, վատ հարաբերությունների մեջ լինելով դիմողի հետ, այդ լուսանկարները ցույց է տվել դիմողի հորը, մյուս համագյուղացիներին: Դիմողի տրանս ինքնության մասին տեղեկությունը տարածվել է ամբողջ գյուղով: Հայրը ստիպել է հեռանալ տնից, քանի որ դիմողը, ըստ նրա, իր ինքնությամբ վարկաբեկում է ընտանիքը:

Նկարագրված դեպքերում տարբեր անձինք հրապարակել են ԼԳԲՏ անձանց անձնական տվյալները, նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվությունը՝նպատակ ունենալով թիրախավորել, ծաղրել, նվաստացնել և այլ կերպ վնաս պատճառել վերջիններիս: Փաստացի, պետությունը ձախողել է իր պարտավորությունը պաշտպանելու անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը. այն չի կարողացել պաշտպանել ԼԳԲՏ անհատների անձնական տվյալների գաղտնիությունը մասնավոր անձանց ոտնձգություններից:

Գրանցվել է ևս 2 դեպք, երբ պետությունը խախտել է իր նեգատիվ պարտավորությունը, չի հարգել ԼԳԲՏ մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Դիմողի նկատմամբ քրեական գործ է հարուցվել զորակոչից խուսափելու համար: Դիմողը վարույթն իրականացնող մարմնին հայտնել է, որ ինքը ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար անձի խանգարման հիմքով, նշելով նաև՝ որ նույնասեռական է: Հետագայում դիմողը տեղեկացել է, որ իր սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը փոխանցվել է իր գրանցման վայրի քննչական վարչության աշխատակցին, որն էլ այցելել է իր ընտանիքի բնակարան և այդ մասին հայտնել ընտանիքին: Այդ աշխատակիցը հանդիպել է նաև դիմողի եղբոր հետ և նրան տեղեկացրել դիմողի՝ նույնասեռական լինելու մասին՝ միաժամանակ ամոթանք տալով և հորդորելով «զսպել» դիմողին:

2020թ. ամռանը դիմողները իրենց նկատմամբ իրականացված հանցագործության մասին հաղորդում են ներկայացրել ՀՀ ոստիկանությանը: Հաղորդում ներկայացնելուց 2 օր անց նկատել են, որ իրենց դեպքի վերաբերյալ լրատվամիջոցների համացանցային տիրույթում տեղեկատվական նյութեր են տարածվել: Դրանցում նշված են եղել իրենց անվանատառերը, տարիքը, հանցագործության հստակ վայրը: Հոդվածները տեղեկություններ են պարունակել քրեական գործով կատարված դատավարական գործողությունների մասին, որոնք կարող էին հայտնի լինել միայն գործով վարույթն իրականացնող ոստիկանության կամ քննչական բաժնի ծառայողներին, ինչից ակնհայտ է դարձել, որ արտահոսքը կատարվել է իրավապահ մարմնի աշխատակցի կողմից:

Գրանցված դեպքերում պետական մարմինների աշխատակիցները առանց օրենքով նախատեսված հիմքերի հանրայնացրել են իրենց ծառայողական գործունեության ընթացքում հայտնի դարձած տվյալները: Անհրաժեշտ է նշել, որ քրեական գործի քննության ընթացքում գործի մասնակիցներին, գործը վարող անձանց հայտնի դարձած տվյալները չեն կարող բացահայտվել գործի հետ կապ չունեցող երրորդ անձանց: Ուստի, նկարագրված դեպքերով պետությունը ձախողել է տուժողների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը հարգելու պարտավորության իրականացումը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 57

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Այս կարգավորումը մեզ հուշում է, որ յուրաքանչյուրը կարող է ընտրել իր ցանկացած մասնագիտությունը, զբաղվել իր նախընտրած աշխատանքով: Գործատուի և աշխատողի հարաբերությունները հիմնվում են կայունության սկզբունքի վրա, ուստի աշխատանքից առանց հիմքերի ազատման դեպքում աշխատակիցը կարող է դատական կարգով պաշտպանել իր իրավունքները: Որպես աշխատանքային հարաբերությունների կայունության երաշխիք՝ պետությունը աշխատանքից ազատման հիմքերի նախատեսումը չի թողնում կողմերի հայեցողությանը՝ խուսափելու համար կամայականություններից, այլ սահմանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով:[40]

2020թ. իրադարձությունները անդրադարձան նաև աշխատանքային հարաբերությունների վրա: Թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածը, թե՛ միջազգային կազմակերպությունները փնտրում էին տարատեսակ ուղիներ՝ համավարակի պայմաններում աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Չնայած արտակարգ պայմաններին՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը չէր կարող չեղարկվել:

Աշխատանքից ազատման դեպք

Նույնասեռ հարաբերությունների մեջ գտնվող կնոջ գործընկերները պատահաբար կարդացել են նրա անձնական նամակագրությունը զուգընկերուհու հետ, ինչից հետո նրան վիրավորել են և ծաղրել: Անձի սեռական կողմնորոշման մասին իմացել է նաև գործատուն, որը գոռգոռացել է նրա վրա և նվաստացրել նրան: Մյուս աշխատակիցները կնոջը հեռացրել են աշխատանքային օնլայն չատերից: Կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հայտարարված արտակարգ դրության պայմաններում կնոջ աշխատավայրը ժամանակավորապես չի գործել: Այնուհետև նրան հայտնել են, որ ազատված է աշխատանքից: Ըստ դիմողի՝ գործատուն օգտագործել է արտակարգ դրություն հայտարարվելու առիթը իրեն աշխատանքից ազատելու համար, սակայն ազատման իրական պատճառը իր սեռական կողմնորոշումն է: Անձը չի ցանկացել օգտվել իրավական պաշտպանության մեխանիզմներից:

40 Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 109-114. https://www.arlis.am/documentview.aspx?docid=146722

Գործնականում խիստ դժվար է լինում բացահայտել նույնասեռական անձանց աշխատանքից ազատելու իրական խտրական դրդապատճառը, քանի որ խտրական հիմքը այդպես էլ չի բարձրաձայնվում գործատուի կողմից: 2019 թ. աշխատանքային օրենսդրությունը լրացվել է, և խտրականության արգելքը, բացի ՀՀ սահմանադրությամբ նախատեսված լինելուց, ամրագրվել է նաև աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտում: Օրենսգրքի 3.1-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է անձին տարբերակելը՝ կախված իր՝ անձնական կամ սոցիալական բնույթի որևէ հանգամանքից, որի արդյունքում աշխատանքային հարաբերությունների դադարման դեպքերում նվազ բարենպաստ պայմաններ են առաջանում աշխատակցի համար: Այսինքն՝ սեռական կողմնորոշման հիմքով անձին աշխատանքից ազատելը ոչ միայն ներառված չէ աշխատանքից ազատելու հիմքերում, այլ նաև արգելվում է՝ որպես խտրականության դրսևորում: Այս պարագայում, կազմակերպությանը դիմած անձը բախվել է խտրականության իր սեռական կողմնորոշման պատճառով. նրա աշխատանքային իրավունքները սահմանափակվել են առանց օրենքով նշված որևէ հիմքի: Իսկ պետությունը ձախողել է աշխատանքային իրավունքի ոլորտում խտրականությունը կանխարգելելու իր պարտավորությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38

Կրթությունը հասարակության զարգացման երաշխիքն է: Ուստի հասարակության գիտակցությունը բարձրացնելու, նրա շարունակական զարգացումն ապահովելու համար պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու կրթության իրավունքի իրացման պայմաններ: ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Միևնույն ժամանակ՝ ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը:[41] Կրթություն ստանալու իրավունքը ներառում է ոչ միայն դպրոցական (միջնակարգ) կրթությունը,[42] այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում[43] (բուհ) սովորելը: Պետությունը, բարձրագույն ուսումնական հաստատություններին տալով ինքնակառավարման իրավունք[44] և կանխատեսելով սովորողի՝ ուսումնական հաստատությունից հեռացնելու հնարավորությունը, ամրագրում է, որ սովորողին ուսումնական հաստատությունից հեռացնելը կարող է իրականացվել այդ հաստատության ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:[45] Այս կարգավորումը հանդես է գալիս որպես բուհում սովորող անձանց կրթության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Կրթության իրավունքի սահմանափակման դեպք

Դիմողը՝ բիսեքսուալ կին, սովորում էր ՀՀ ռազմական ուսումնական հաստատություններից մեկում: 2020 թ. աշնանը, այն բանից հետո, երբ նրա սեռական կողմնորոշումը հայտնի է դարձել կրթահամալիրի տնօրինությանը, նրան զանգահարել և հայտնել են, որ այլևս չի կարող շարունակել իր ուսումը այդ հաստատությունում: Որպես պատճառ բանավոր կերպով նշել են ծխելը և նույնասեռական լինելը: Այդ մասին կրթահամալիրից տեղեկացրել են նաև դիմողի մորը և տատիկին: Դիմողը չի ցանկացել իրավական ճանապարհով վերականգնել իր իրավունքները, քանի որ դա համարել է ոչ արդյունավետ:

41 Տե՛ս Մարդու Իրավունքների և Հիմնարար Ազատությունների Պաշտպանության Մասին Կոնվենցիայի՝ Փոփոխված 11-րդ Արձանագրությամբ, Հոդված 2. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870
42 Տե՛ս Bahri SULAK v Turkey, No 24515/94.
43 Տե՛ս Leyla Şahin v. Turkey [GC], § 141; Mürsel Eren v. Turkey, § 41.
44 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 38, մաս 3-րդ:
45 Տե՛ս ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 17, մաս 6-րդ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=103999

Կրթական հաստատության ներքին ակտերը չեն կարող պարունակել այնպիսի դրույթներ, որոնք համահունչ չեն ՀՀ Սահմանադրությանը: Այս պարագայում դիմողի կրթության իրավունքի սահմանափակումը պայմանավորված է եղել նրա սեռական կողմնորոշմամբ, ինչը նշանակում է, որ ուսումնական հաստատությունը խախտել է անձի՝ նաև խտրականությունից զերծ լինելու իրավունքը:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՉՈՒԳՈՐԴՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ժամանցի վայր այցելելու արգելք

Պետությունը պետք է ստեղծի այնպիսի մթնոլորտ, որտեղ անձինք կարողանան իրենց իրավունքները իրացնել, գործել, ապրել, աշխատել, ծառայություններից օգտվել առանց որևէ տեսակի խտրականության իրենց անձնական հատկանիշների նկատմամբ:

2020 թ. ընթացքում երևանյան փաբի մենեջերը մի քանի անգամ խոչընդոտել է տրանս անձի մուտքը փաբ: Մասնավորապես՝ 2 տարբեր անգամներ փաբում գտնվելու ընթացքում նա նույն անձից պահանջել է լքել փաբի տարածքը տարբեր պատրվակներով, օրինակ, որ անձը կարճ կիսաշրջազգեստ է հագել, սակայն դեպքերից մեկի ժամանակ անձը եղել է սպորտային համազգեստով, իսկ մյուսի ժամանակ տարածքում եղել են նույնանման հագուստով այլ անձինք, սակայն մենեջերը տարածքը լքել պահանջել է միայն տրանս անձից: Մեկ այլ անգամ մենեջերը արգելել է տրանս անձին ներս գնալ և մնալ ժամանցային վայրում՝ պատճառաբանելով, որ նա տրանս է, պետք է փաբ գա առանց դիմահարդարման և տղամարդու հագուստով:

Այս պարագայում չնայած ժամանցային վայրի՝ փաբի տարածքը մասնավոր սեփականություն է, սակայն մասնավոր անձինք՝ սեփականատերերը, նույնպես պետք է իրենց ծառայությունները տրամադրեն առանց տարբերակվող վերաբերմունքի, չպետք է առանձնացնեն անհատներին իրենց արտաքին տեսքի, հագուստի, ինքնության պատճառով: Փաբի սեփականատիրոջ կողմից տրանս անձի մուտքը իր հաստատություն սահմանափակելը ոտնահարել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Բացի այդ՝ ժամանցային վայրերը հանդիսանում են ծառայությունների մատուցման վայրեր, ուստի այդ պարագայում նույնպես պետությունը պետք է ապահովի այդ ծառայություններից հավասար օգտվելու հնարավորություններ: Հետևաբար, պետությունը ձախողել է նշված իրավունքները և ազատությունները իրացնելու համար ոչ խտրական միջավայր ստեղծելու միջազգային պարտավորությունը:

Տրանս անձանց վտարում վարձակալած բնակարանից

Բնակարանի վարձակալության դեպքում վարձակալը դրա նկատմամբ ձեռք է բերում տիրապետման և օգտագործման իրավունք:[46] Անշարժ գույքի վարձակալության դեպքում պետք է գրավոր պայմանագիր կնքել, որը ենթակա է նոտարա-

46 Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 35. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148978

կան վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:[47] Սակայն պրակտիկայում օրենսդրության այս պահանջները չեն պահպանվում և նման գործարքներն անվավեր են համարվում: Սա իրականում տարածված բնույթ է կրում Հայաստանում և հիմք է հանդիսանում անձանց մի շարք իրավունքների ոտնահարման, այդ թվում՝ բնակարանից մարդկանց ապօրինի վտարման: Նման դեպքերը շատ հաճախ դրսևորվում են այն անձանց հանդեպ, որոնք ունեն տարբերվող արտաքին, կամ գենդերային ինքնություն: Այդ հանգամանքը ևս մեկ առիթ է հանդիսանում սեփականատերերի համար անհանդուրժող և տարբերակված մոտեցում ցուցաբերել վերջիններիս նկատմամբ՝ առանց որևէ ողջամիտ հիմքի ու բացատրության իրենց բնակարանից դուրս հանելով վարձակալներին: Դրա մասին են փաստում կազմակերպության կողմից արձանագրվող դեպքերը: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ոք ունի սահմանադրորեն երաշխավորված հավասար վերաբերմունքի իրավունք հասարակական կյանքի ցանկացած ոլորտում, ընդ որում՝ վարձակալության դիմելու և այդ հիմքով գույքն օգտագործելու:

2020 թ. ընթացքում կազմակերպության կողմից գրանցվել է տրանս անձանց՝ իրենց վարձակալած բնակարանից ապօրինի վտարման 3 դեպք:

Տրանս կինը 1 տարով բնակարան է վարձակալել Երևան քաղաքում: Վարձակալությունից մոտ 2 շաբաթ անց բնակարանի սեփականատերը պահանջել է դուրս գալ բնակարանից նույն ամսվա ավարտին: Դիմողի խոսքերով՝ բնակարանի սեփականատիրոջ նման պահանջը կապված է իր գենդերային ինքնության հետ. դիմողի հարևանները իմացել են դիմողի տրանս լինելու մասին և այդ մասին տեղեկացրել են բնակարանի սեփականատիրոջը, ով էլ չի ցանկացել, որ իր բնակարանում բնակվի տրանս անձ:

Մեկ այլ դեպքում 2 տրանս կանայք բնակարան են վարձակալել միասին: Բնակարանի վարձակալության վերաբերյալ սեփականատիրոջ հետ նրանք համաձայնություն են ձեռք բերել՝ թաքցնելով իրենց տրանս ինքնությունը: Նրանք այդտեղ բնակվել են մոտ 8 ամիս: Նրանց հարևանները նկատել են, որ նրանք տրանս անձինք են. դիմողները հաճախ կրել են կանացի հագուստ ու կեցվածք: Հարևանները ստորագրահավաք են կազմակերպել և տան սեփականատիրոջից պահանջել վարձակալներին դուրս անել բնակարանից: Սեփականատերը դիմողներին ցույց է տվել ստորագրություններով թերթիկը և պահանջել ազատել բնակարանը:

Նախորդ դեպքով դիմողները հեռացել են և նոր բնակարան վարձակալել: Հարևանները կրկին տեղեկացել են նրանց գենդերային ինքնության մասին, սեփականատիրոջից պահանջել հեռացնել նրանց բնակարանից, այլապես՝ նրանք ոստիկանությանը կդիմեն: Տրանս կանայք ստիպված են եղել կրկին դուրս գալ նոր բնակարանից:

47 Մանրամասն, տե՛ս նույն տեղը, հոդվածներ 610, 611:

Նկարագրված դեպքերում տրանս կանայք բախվել են խտրական վերաբերմունքի իրենց գենդերային ինքնության և արտահայտման պատճառով: Չնայած այս դեպքերում վարձակալները չեն կնքել բնակարանի վարձակալության գրավոր պայմանագիր և չեն գրանցել իրենց իրավունքները օրենքով սահմանված կարգով,[48] այնուամենայնիվ նշված հանգամանքը տվյալ պարագայում երկրորդվում է, քանի որ Հայաստանում գործնականում տարածված է բնակարանը վարձակալել բանավոր պայմանավորվածության հիման վրա: Իսկ փաստացի առաջացած իրավահարաբերությունները խզվել են այն բանից հետո, երբ վարձակալների գենդերային ինքնության մասին տեղեկատվությունը հայտնի է դարձել բնակարանի սեփականատերերին, ովքեր էլ հենց այդ հիմքով, և ոչ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում[49] տրանս անձանց պահանջել են դուրս գալ բնակարաններից: Այս պարագայում վարձակալի՝ գույքի վարձակալությամբ ձեռք բերված իրավունքները ոտնահարվել են նրանց գենդերային ինքնության նկատմամբ խտրականության հիմքով, ինչն էլ խոսում է նրանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման մասին:

48 Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 662:
49 Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 622:

ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

ՀՀ-ի պարտականությունն է պատշաճ քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ: Պետությունը օրենքների, ենթաօրենսդրական ակտերի ընդունման, իրավական փոփոխությունների արդյունքում պետք է ստեղծի ոտնձգությունը քննելու, հանցավորին պատժելու, տուժածին պատճառված վնասը փոխհատուցելու մեխանիզմներ: Միաժամանակ պետք է ապահովվի մեխանիզմների արդյունավետությունը. այդ մեխանիզմներից օգտվելը պետք է մատչելի և հասանելի լինի տուժածների համար, քննություն իրականացնող ծառայողները պետք է դրսևորեն ողջամիտ ջանասիրություն, խուսափեն կրկնակի զոհականացումից, պարբերաբար վերապատրաստվեն՝ կարեկից և ոչ խտրական վերաբերմունքի հմտություններ ձեռք բերելու համար:

Ներկայումս ՀՀ-ն չունի խտրականության կանխարգելման վերաբերյալ առանձին իրավական ակտ: Դեռևս 2018թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից քննարկման է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը,[50] սակայն մինչ օրս չի ընդունվել: ՀՀ քրեական օրենսգիրքը պատիժ է նախատեսում մարդու իրավունքները խտրականությամբ զուգորդված խախտելու համար:[51] Կազմակերպության ուղարկած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ հոդվածի՝ գործող ձևակերպումներով ընդունումից հետո մինչ օրս այդ հոդվածով որևէ գործ չի հարուցվել, ինչը նշանակում է, որ խտրականությամբ զուգորդված իրավախախտումը պատժելու քրեական այս մեխանիզմը գործուն չէ ոչ միայն սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության նկատմամբ խտրականության դեպքերում, այլ՝ առհասարակ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (011) 56 12 32, ֆաքս՝ (010) 54 59 45

«22» 12 2020 թ. թիվ 3/28824

[redacted]

Ի պատասխան 2020թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված Ձեր հարցման՝ հայտնում եմ, որ.

ա. 2013թ.-ից մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործեր չեն հարուցվել,

բ. ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդվածի հատկանիշներով 2020թ. ընթացիկ ժամանակահատվածում հարուցվել է 9 քրեական գործ, որոնցից 2-ը՝ որանով արգելված արարքը սեռական կողմնորոշմամբ պայմանավորված կատարելու համար:

Պետ,
ոստիկանության փոխգնդապետ Վ.Վարդանյան

Կատ. Ա.Գիլինգարյան /010 59-60-81/

Ոստիկանության տրամադրած տեղեկատվությունը

50 Տե՛ս «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների և հարակից օրենքների նախագծերը. https://www.e-draft.am/projects/1801/about

51 Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված143:

ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումները համատարած են. դրանք տեղի են ունենում մայրաքաղաք Երևանում, ՀՀ մարզերի տարբեր քաղաքներում և գյուղերում, խտրականության թիրախ են դառնում տարբեր տարիքի, սոցիալական դրության, զբաղվածության և նախասիրության ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ: Չնայած դրան՝ ԼԳԲՏ անձինք հակված չեն դիմելու իրավական պաշտպանության մեխանիզմների: Նրանք դա բացատրում են մի քանի հիմնական պատճառներով.

- *չեն վստահում իրավապահ մարմիններին, մասնավորապես՝ ոստիկանության աշխատակիցներին, կարծում են՝ իրենց գործերը քննվում են ոչ օբյեկտիվորեն,*
- *արդյունավետ չեն համարում իրավական պաշտպանության մեխանիզմները,*
- *կարծում են, որ իրավունքների պաշտպանությունը երկար է տևում և կարող է ձգձգվել տարիներով,*
- *մտավախություն ունեն, որ իրենց նկատմամբ իրականացված հանցագործության, իրենց ՍԿԳԻ մասին տվյալները կհանրայնացվեն իրավապահ մարմինների կողմից,*
- *իրենց պաշտպանված չեն զգում հանցավորներից և վախենում են նրանց հաշվեհարդարից:*

Լինում են նաև դեպքեր, երբ տուժածները փորձում են ինքնուրույն վերականգնել իրենց խախտված իրավունքները, օրինակ՝ ընդհանուր հայտարարի գալ իրավախախտի հետ, որպեսզի բռնությունը չկրկնվի:

Իրավախախտումների դիմումների ընթացքը

2020 թ. ընթացքում արձանագրված 40 իրավախախտումներից միայն 20 դեպքով է ոստիկանությանը գրավոր կամ բանավոր դիմում ներկայացվել ոտնահարված իրավունքի վերականգնման կապակցությամբ: Այս թիվը ներառում է և՛ հանցագործության մասին հաղորդումները, և՛ ընտանեկան բռնության վերաբերյալ դիմումները: Ուշագրավ է, որ ներպետական օրենսդրության կարգավորումները ընտանեկան բռնության դեպքերում նախատեսում են հանցագործության մասին առանձին հաղորդման ներկայացում մասնավոր բողոքի գործերի դեպքում,[52] եթե ընտանիքում բռնության ենթարկված անձը ցանկանում է նաև, որ իր նկատմամբ գործադրված բռնությունը քննվի ոչ միայն ընտանեկան բռնության շրջանակներում, այլ նաև որպես առանձին հանցագործություն, իսկ իրավախախտը կրի քրեական օրենսդրությամբ նախատեսված պատիժը: Նման հաղորդում չներկայացնելու դեպքում բռնարարի նկատմամբ կիրառվում են միայն Ընտանիքում բռնության կանխարգելման մասին օրենքում նախատեսված սահմանափակումները: Բացառություն են կազմում ընտանեկան բռնության այն դեպքերը, երբ տուժողը չի կարող ինքնուրույն պաշտպանել իր իրավունքները՝ ելնելով իր անօգնական վիճակից կամ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստից:[53] Իսկ հանրային մեղադրանքի գործերով, օրինակ՝ անձին ապօրինի ազատությունից զրկելու դեպքով, իրավապահ մարմինները պարտավոր

52 Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 183, մաս 1-ին. https://www.arlis.am/documentview.aspx?docid=150102
53 Նույն տեղում, հոդված 183, մաս 4-րդ:

են քննություն իրականացնել՝ անկախ տուժողի բողոքի առկայությունից:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանցից միայն 6-ն է դիմել իրավապահ մարմիններին: Բռնության գործադրած անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտության որոշում: Բռնության ենթարկված անձանց մեծ մասը չի դիմել իրավապահ մարմիններին, քանի որ չի ցանկացել ընտանիքի անդամների դեմ բողոք ներկայացնել, նրանց արարքը իրական բռնություն չի համարել կամ չի վստահել իրավապահ մարմիններին՝ կարծելով, որ իրավունքները այդտեղ չեն պաշտպանվի, դեռ ավելին՝ իրավապահ մարմինների աշխատակիցները իրենց նկատմամբ նույնպես բռնություն կգործադրեն կամ կծաղրեն, ինչպես նաև կտարածեն իրենց սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության մասին տեղեկատվությունը:

Ընտանեկան բռնության դեպքերից միայն 2-ով է դիմում ներկայացվելուց զատ ներկայացվել նաև հաղորդում հանցագործության մասին: Տուժածներից մեկը հետագայում հրաժարվել է բողոքից:

Ընտանեկան բռնության արձանագրված դեպքերից մեկով, երբ բռնության ենթարկված անձը դիմել է ոստիկանությանը, ոստիկանության այդ տարածքի բաժնի պետի հետ զրուցելուց հետո հրաժարվել է բողոքից, քանի որ պետը բանավոր կերպով խոստացել է, որ բռնարարը այլևս բռնություն չի գործադրի տուժածի նկատմամբ, և համոզել է չբողոքել:

Իրավապահ մարմիններին ներկայացված հաղորդումների հիման վրա նախապատրաստվող նյութերով կամ քննվող գործերից գրեթե ոչ մեկով քննության առարկա չի դարձվել իրավախախտումը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության կամ գենդերային արտահայտման հիմքով կատարելը: Ընդամենը մեկ դեպքով իրավապահ մարմինները քննում են անձանց նկատմամբ բռնության կոչեր հնչեցնելը, ինչը պայմանավորված է նրանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հետ:

Արձանագրված իրավախախտումներից որևէ մեկով գործը մեղադրական եզրակացությամբ դատարան չի ուղարկվել: Որոշ դեպքերում տուժածները հաշտվել են իրավախախտի հետ, ինչի արդյունքում քրեական գործերը կարճվել են կամ քրեական գործ չի հարուցվել: Որոշ հաղորդումներին ընթացք չի տրվել. ըստ ոստիկանության բացակայել է հանցակազմը, իրավախախտումը քաղաքացիաիրավական բնույթի է եղել, և այլն: Բոլոր դեպքերում գործով վարույթն իրականացնող մարմինը ձգձգել է գործի ընթացքի մասին դիմողներին տեղեկություններ տրամադրելը կամ ընդհանրապես չի տեղեկացրել կայացված որոշումների մասին:

Փինքը գործերի ընթացքի մասին առավել ծավալուն վիճակագրություն չի ներկայացնում, քանի որ այդ տեղեկատվության մի մասը ստացվում է տուժածների բանավոր կերպով տրամադրած տվյալների հիման վրա, իսկ վերջիններս էլ իրավական գիտելիքների բացակայության պայմաններում չեն տրամադրում գործով կայացված որոշումների վերաբերյալ համապարփակ և անհրաժեշտ տեղեկություն: Դիմողների մյուս մասը հետևողական չէ իր գործերով քննության նկատմամբ և հետամուտ չի լինում իր գործով որոշումների ստացմանը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ իրավապաշտպան կազմակերպությունների

կողմից վարվող գործերով վարույթն իրականացնող մարմինների՝ քրեական գործ չհարուցելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշումները բողոքարկվում են վերադաս ատյաններին՝ նպատակ ունենալով վերականգնել ԼԳԲՏ անձանց խախտված իրավունքները և հասնել արդարության հաստատման:

Իրավապահ մարմինների աշխատակիցների վերաբերմունքը

Որոշ դեպքերում իրավապահ մարմինների աշխատակիցները դրսևորում են չեզոք վերաբերմունք, շատ հազվադեպ՝ աջակցող են բռնության ենթարկված անձի նկատմամբ: Նրանք հաճախ հետաքրքրասիրություն են ցուցաբերում տուժածների սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և այլ հատկանիշների վերաբերյալ: Քննություն իրականացնող ծառայողները չեն տարբերում սեռական կողմնորոշումը գենդերային ինքնությունից, նույնացնում են տրանս և նույնասեռական անձանց, գործածում են ոչ ճիշտ և վիրավորական տերմիններ, ինչը խոսում է իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում սեռականության վերաբերյալ ոչ բավարար գիտելիքների մասին: Երբեմն նշմարվում է նաև ծաղրական և վիրավորական վերաբերմունք ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Կազմակերպությանը դիմած տրանս անձանցից մեկը հայտնել է, որ ոստիկանության աշխատակիցները իրեն ծաղրել են, հարցեր տվել իր գենդերային ինքնությունից, քննադատել արտաքինը՝ ասելով «Էս մանիկյու՞ր ես քսում», և այլն:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ պետությունը 2020 թ. ընթացքում ևս չի կարողացել կատարել ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանելու և խախտված իրավունքները վերականգնելու իր պարտականությունները. չեն ստեղծվել պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, իսկ մեխանիզմները գործարկող մարմինները չեն դրսևորել անաչառ վերաբերմունք:

ԲԱԺԻՆ 2.

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42

Խոսքի ազատությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ: Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների:[54] Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները:[55] Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն:[56]

Ատելության խոսքի կարգավորումները

Ատելության խոսքի սահմանումը դեռևս չունի մեկ համընդհանուր կերպով ճանաչված ձևակերպում, սակայն գործնականում՝ միջազգային մարմինների կողմից տրվել են պայմանական մեկնաբանություններ:

Ատելության խոսք կարող են համարվել արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով) անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:[57]

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ

54 Տե՛ս UN Human Rights Committee, General comment No. 34.
55 Տե՛ս Erbakan v Turkey, No 59405/00.
56 Տե՛ս UN Human Rights Committee, General comment No. 11.
57 Տե՛ս Recommendation No. R (97) 20 of the Committee of Ministers to Member Stateson "Hate Speech", 1997: https://bit.ly/2wa4QoE

որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:[58]

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,

գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս շահերի պաշտպանության համար: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»:

Ատելության խոսքը դրսևորվում է ոչ միայն բռնությունների, խտրականության կոչերով կամ դրանց արդարացմամբ և ջատագովությամբ, այլ նաև վիրավորական, նվաստացուցիչ, թշնամական վերաբերմունքով, անհանդուրժողականության սերմանմամբ որոշակի խմբերի նկատմամբ: Այն մի դեպքում կարող է հանգեցնել անձանց խմբերի կամ անհատների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների, մյուս կողմից կարող է խախտել որոշակի հատկանիշներով առանձնացող անձանց հոգեբանական ամբողջականությունը՝ պատճառելով հոգեկան տառապանք կամ ճնշվածություն:

Ատելության խոսքը որոշ երկրների օրենսդրությամբ հասցեավորված է տարբեր մակարդակներում: Օրինակ՝ Կանադայի, Իսլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և այլ երկրների օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:[59]

Ատելության խոսքի համար նախատեսված պատասխանատվությունը պայմանավորված է դրա ծանրությամբ: Ատելության խոսքի ծանրությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները՝[60]

- *Համատեքստը, որում այն հնչում է.*
- *Դրա հեղինակը, նրա դերը, հասարակության կողմից նրակմամբ վերաբերմունքն ու վստահության աստիճանը,*

58 Տե՛ս International Covenant on Civil and Political Rights, 1966, Article 19(2).
59 Համապատասխան օրենսդրական կարգավորումները հետևյալ հղումներով՝
Կանադա. https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-318.html
Իսլանդիա. https://www.government.is/library/Files/General_Penal_Code_sept.-2015.pdf
Մեծ Բրիտանիա. http://www.legislation.gov.uk/ukpga/2003/44/section/146
Ֆինլանդիա. http://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1889/en18890039.pdf
Ֆրանսիա. https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20181010 Նիդերլանդներ. https://wetten.overheid.nl/BWBR0001854/2018-09-19#BoekTweede_TiteldeelV_%20Artikel137c
60 Տե՛ս Annual report of the United Nations High Commissioner for Human Rights, 2013, Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred: https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

- *Նպատակը. կարևոր է՝ արդյոք նման խոսքը հնչեցվել է դիտավորյա՞լ՝ որոշակի հետևանք առաջացնելու նպատակո՞վ, թե անզգուշությա՞մբ,*
- *Բովանդակությունը. կարևոր է, թե խոսքը որքանով է ազդեցիկ և որքանով կարող է որոշակի վնաս պատճառել,*
- *Տարածման միջոցները, լսարանը. կարևոր է, թե ինչ ծավալի հանրային տարածում է գտել խոսքը,*
- *Ռիսկայնությունը:*

Այս հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող է տարանջատվել ատելության խոսքի համար պատասխանատվության աստիճանը: Այնպիսի իրավիճակում, երբ հանրության 95 տոկոսը բացասական դիրքորոշում ունի նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ,[61] ատելության խոսքի նույնիսկ ամենաանվնաս թվացող դրսևորումը կարող է խորացնել հասարակության բևեռացումն ու հանգեցնել իրավախախտումների: Այն դեպքում, երբ ատելության խոսքի հեղինակը պետական պաշտոնատար անձ է, դրա վտանգավորության աստիճանն առավել բարձր է ոչ միայն պաշտոնյայի վայելած հեղինակության բերումով, այլ նաև՝ պայմանավորված անպատժելիության մթնոլորտի ձևավորմամբ:

Անզգուշաբար հնչած ատելության խոսքը, պետք է արժանանա քննադատության և որոշ դեպքերում, նույնիսկ, պատասխանատվության հանգեցնի, սակայն այս դեպքում քրեական պատասխանատվությունը պարտադիր չէ: Մասնավորապես, այդպիսի արտահայտությունները կարող են դատապարտվել պետական պաշտոնատար անձանց կողմից, կարող է նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ, ինչպես պետական մարմինների ծառայողների, այնպես էլ՝ մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների համար՝ որպես էթիկայի խախտում: Խոսքի բովանդակության վերլուծության համար հատկապես կարևոր է դրա հետևանքների գնահատումը. այն կարող է անձանց որոշակի խմբի պահել վախի մթնոլորտի և հոգեբանորեն ճնշված վիճակում՝ անընդհատ սպառնալիքի ներքո: Ատելության խոսքի հասանելիությունը, այսինքն, տարածումը հանրության լայն շրջանում, պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, թե որտեղ է այն հնչել, այնպես էլ նրանով, թե արդյոք այն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, թե ոչ: ԶԼՄ-ների կողմից նման խոսքի տարածումը ևս պետք է ստանա իրավական գնահատական: Ի վերջո, ատելության խոսքը պետք է լինի իրական և հստակ, այսինքն, խոսքում օգտագործված արտահայտությունները պետք է կամ պարունակեն հստակ թշնամանք, որոշակի հատկանիշով պայմանավորված վիրավորանք, բռնության, խտրականության կոչեր, կամ պետք է ընկալելի լինեն որպես այդպիսին. Դրա ոչ միանշանակ ընկալումը նվազեցնում է վտանգավորության աստիճանը:

61 Տե՛ս «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2016 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

Ատելության խոսքի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունը

2019 թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունում էականորեն փոխվել է ատելության խոսքի հասցեավորմանն ուղղված պետական քաղաքականությունը: Եթե նախկինում ատելության խոսքի հեղինակը հիմնականում իշխող քաղաքական ուժերի ներկայացուցիչներն էին,[62] ապա՝ 2018 թ. «թավշյա հեղափոխություն»-ից ի վեր ատելության խոսքն ավելի հաճախ օգտագործվում է Ազգային ժողովում ներկայացված ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների, այդ կուսակցությունների ներկայացուցիչ, պաշտոնատար անձ չհանդիսացող անձանց կողմից: Հաճախ խոսքի ազատության անվան տակ դրսևորվում է որոշակի խմբի անձանց արժանապատվությունը նսեմացնող, մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը ոտնահարող, երբեմն նաև բռնության կոչեր պարունակող խոսք: Քաղաքական գործիչների կողմից այսպիսի խոսքը կիրառվում է քաղաքական իշխանության դեմ հասարակության շրջանում բացասական տրամադրություններ ստեղծելու նպատակով՝ շահարկելով խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանն ուղղված որևէ քայլ: Նման շահարկումներն իրականացվում են մանիպուլատիվ մեթոդներով՝ հաճախ իրականությանը չհամապատասխանող փաստերի զուգակցմամբ: Ատելության խոսքի թիրախը Հայաստանում հիմնականում ԼԳԲՏ անձինք են.[63] Պատճառը հայաստանյան հասարակության շրջանում այս խմբի անձանց նկատմամբ կարծրատիպային մոտեցումներն են: Օրենսդիր մարմնի ներկայացուցիչների կողմից տարածվող ատելության խոսքի վտանգավորությունը կայանում է ոչ միայն հասարակության շրջանում նրանց հեղինակությամբ և խոսքի ազդեցությամբ, այլ նաև որպես օրենսդրություն մշակող մարմնի ներկայացուցիչ՝ նրանց գործառույթով:

Որպես նվազ վտանգավոր ատելության խոսքի հեղինակ են հանդես գալիս նաև հասարակական գործիչները, դասախոսները, հոգևորականները: Որպես ատելության խոսքի տարածող՝ հատկապես ակտիվ են որոշ հասարակական կազմակերպությունների և նախաձեռնությունների անդամներ, որոնք նպատակաուղղված գործունեություն են ծավալում իշխող կուսակցությանը վարկաբեկելու և ԼԳԲՏ անձանց հարցերը այդ նպատակով մանիպուլացնելու ուղղությամբ: Նշյալ խմբերի գործունեությունը օրինակներով ներկայացված է հաջորդ բաժիններում:

Դեռևս 2019 թվականի ընթացքում Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ մշակվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների պլանը, որտեղ տեղ է գտել ատելության խոսքի արգելքի օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը՝ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա:

2019 թ. մեկնարկած գործընթացի արդյունքում Ազգային ժողովի Մարդու իրավունքների և հանրային հարցերի հանձնաժողովի «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների կողմից ձևավորվել է Ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված օրենսդրության բարեփոխման շուրջ աշխատանքային խումբ, որի

62 Տե՛ս Հետազոտություն «Հայաստանում պետական պաշտոնյաների կողմից դրսևորված ատելության խոսքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2019 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/hatespeech_hy.pdf (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

63 Տե՛ս Զեկույց «Ատելության խոսքի մշտադիտարկում (պիլոտային ծրագիր)», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 2018-2019 թթ. https://bit.ly/2OdLBDt (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

աշխատանքներում ներգրավվել են նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ:[64] Զուգահեռաբար, ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է Քրեական օրենսգրքի լրացման նախագիծ, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար:[65]

2020 թ. ընթացքում կրկին արձանագրվել են անձանց սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության խոսքի դեպքեր:

Ատելության խոսքի օրենսդրական կարգավորման աշխատանքային խմբի գործունեությունը և արձագանքները

Ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված օրենսդրության բարեփոխման շուրջ աշխատանքային խմբի ձևավորումը ողջունվեց քաղաքացիական հասարակության կողմից: Որպես խմբում ներգրավման չափանիշ ներկայացվել էր վերջին հինգ տարվա ընթացքում ատելության խոսքի առնչությամբ աշխատանքային փորձը: Այն հասարակական կազմակերպությունները և փորձագետները, ովքեր բավարարում են նշված չափանիշին, ներգրավվել են խմբի աշխատանքներում: Ըստ այդմ մերժվել է այն հասարակական կազմակերպությունների և անհատների ներգրավումը, որոնք չեն ունեցել համապատասխան փորձ և հետաքրքրություն: Այս որոշումը բուռն արձագանք ստացավ ԱԺ ԲՀԿ խմբակցության կողմից, որի պատգամավորները հրաժարվեցին խմբին անդամակցումից՝ մեկնաբանելով, որ խումբը տարբերակված մոտեցմամբ է ձևավորվել: Համարելով, որ լավ կլինի, եթե խմբում ներգրավվեն անգամ իրենց կանոնադրական նպատակներով և թիրախներով տարբերվող կազմակերպություններ, նրանք նշել են, որ եթե խմբում ներգրավվում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Փինքը և Կանանց ռեսուրսային կենտրոնը, պետք է ներգրավվեն նաև «ազգային ուղղվածության» ՀԿ-ներ: Լրատվամիջոցներից մեկին տրված հարցազրույցում, անանուն կերպով, որպես ԲՀԿ խմբակցության դիրքորոշում ներկայացվել է հետևյալը. *«Այս կազմի դեմ ոչինչ չունենալով հանդերձ, կարող ենք նշել, որ միայն հիշյալ ՀԿ-ների ընդգրկումը վկայում է այն ուղղվածության մասին, որով փորձելու են գնալ՝ Հայաստանում ատելության խոսքը սահմանելիս: Այսինքն, արդեն իսկ ակնհայտ է, որ սահմանումները ուղղված ու թիրախավորված են լինելու բացառապես սեռական փոքրամասնությունների իրավունքներին ու դեպքերին, բայց ոչ, օրինակ, սոցիալական ցանցերում նախկինների ու քաղաքական հակառակորդների նկատմամբ (հանուն արդարության ասենք՝ երկուստեք բռնության, ատելության կոչերին, հայհոյանքին անեծքին ու նզովքին»*:[66]

64 Դեկտեմբերի 16-ին Նաիրա Զոհրաբյանի նախագահությամբ տեղի է ունեցել ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստը, որի ընթացքում հանձնաժողովի անդամ Սարգիս Խանդանյանն առաջարկել է ստեղծել աշխատանքային խումբ, որը կզբաղվի ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված ՀՀ օրենսդրության բարեփոխումների հարցերով. http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=12494&year=2019&month=12&day=16

65 Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին». https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141919

66 Տե՛ս «hraparak.am», «Փինք»-ը, «Կանանց ռեսուրսային կենտրոն»-ն ու Սորոսի գրասենյակն են ընդգրկված ԱԺ աշխատանքային խմբում, 2020 թ. https://hraparak.am/post/04ead0e61bd604b10a7e40e0db55c244 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

ԲՀԿ խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանը, զերծ չմնալով խտրական և ատելություն պարունակող խոսքից, տարբեր հարցազրույցներում հայտնել է հետևյալ դիրքորոշումը. *«Երբ մենք մեր կուսակցության մեր խմբակցության ընկերներով պահանջեցինք էդ ատելության խոսքը դատապարտող այսպես ասած աշխատանքային խմբում ներագրավել հավասար թվով ներկայացուցիչներ բոլոր շահագրգիռ կողմերից, իրենք անմիջապես հրաժարվեցին, որովհետև Էնտեղ ցավոք սրտի Էտեղ տեղ Էին գտել հիմնականում մեկ կողմի ներկայացուցիչները, ովքեր շահագրգիռ ե Հայաստանը այսպես ասած բաց հասարակություն դարձնելու, չգիտեմ ինչոր այլասեվածություններ ներդնելու. և Էս կողմը, որ պետքա գար, պաշտպաներ ավանդական արժեքները, էդ կողմի անդամները ֆեյսբուքյան գրառումով պետքա ներկայանային»*:[67]

«Ավելի գլոբալ հարցադրումներ կան. Ես օրինակ իմ անձնական կարծիքը սա է, որ իրականում սա շինծու օրակարգ է, սա, քաղաքական այլախոհությունը զսպելու մի մեխանիզմ է մտածված: Որովհետև տեսեք, ինչ ա նշանակում ատելության խոսք? Այո, ես ատում եմ համասեռամոլությունը, այո, ես ատում եմ տգիտությունը, ես ատում եմ ոչ կառուցողական մոտեցումը, ես ատում եմ հայրենիքի դավաճանությունը»:[68]

Աշխատանքային խմբի գործունեությունը, այնուամենայնիվ, դժվար է համարել արդյունավետ: Այս հանգամանքը, սակայն, ունի նաև օբյեկտիվ պատճառներ՝ կապված տարվա ընթացքում ֆորս-մաժորային իրադրության հետ: 2020 թ. մարտ ամսին տեղի է ունեցել ԱԺ պատգամավորների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ առաջին և միակ հանդիպումը, որի ընթացքում մասնակիցները փոխանակվեցին ատելության խոսքի կարգավորման անհրաժեշտության և շրջանակների վերաբերյալ իրենց դիրքորոշումներով: «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից խմբին է ներկայացվել ինչպես թեմային վերաբերող իրավական հետազոտություններ, այնպես էլ՝ առաջարկների փաթեթ, որոնք ընդունվել են ի գիտություն: Հանդիպումները, սակայն, շարունակական բնույթ չունեցան: Կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ռեժիմին հաջորդեց ռազմական դրությունը, որի պատճառով պետական մարմինների օրակարգային առաջնահերթությունները փոխվեցին: Խմբում ներգրավված պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունների ուղղությամբ տարված աշխատանքի վերաբերյալ դեռևս տեղեկատվություն չի հայտնվել:

Բռնության հրապարակային կոչերի քրեականացումը

Չնայած նրան, որ ձևավորվել էր ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված օրենսդրական բարեփոխումների աշխատանքային խումբ, և որ նոր Քրեական օրենսգրքի նախագիծը գտնվում էր ակտիվ քննարկումների փուլում, Ազգային ժողով ուղարկվեց և ընդունվեց Արդարադատության նախարարության կողմից

«irates.am», «Ատելության դեմ ուղղված պայքարն ու գենդերային իրավահավասարություն քարոզող ՀԿ-ները», 2020 թ. http://www.irates.am/hy/1580456022 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
67 Տե՛ս «NEWS AM», «Բավական է աճպարարություն անել. Գևորգ Պետրոսյանը՝ իշխանություններին», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=iEfNQSaegug (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
68 Տե՛ս «Hraparak TV», «Այո, ես ատում եմ համասեռամոլությունը», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=kUWmHtPn14Q (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

առաջ քաշված բռնությունների հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու քրեականացման նախագիծը:

Մինչ այդ, կառավարության նիստի ընթացքում Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, թե Հայաստանում բռնության քարոզչություն իրականացնող ցանկացած մարդ պետք է ստանա կոշտ հակահարված:[69]

Նախագիծը ևս առանց քննադատությունների չընդունվեց: Ազգային ժողովում քննարկվեց հարցը, թե արդյոք բոլոր դեպքերում պետք է բռնության կոչերը կամ դրանց արդարացումը հանգեցնի քրեական պատասխանատվության:

ԲՀԿ խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանն իր ելույթում հնչեցրեց հետևյալ միտքը. *«Մենք մեր օրենսդրությունը շարադրելիս, այո հիմք ընդունելով մարդու իրավունքների վերաբերյալ հանրաճանաչ իրավական ակտերի դրույթները, եվրոպական իրավական մտքի բարձունքները, բայց չպիտի մոռանանք, որ մենք հայ ենք, մենք ունենք ազգային հոգեկերտվածք, ազգային մտածողություն. Հիմա ես ընդամենը մի օրինակ կբերեմ. Շատ անցանկալի օրինակ, բայց պիտի բերեմ: հավանաբար բոլորդ էլ տեսել եք, մի քանի օր առաջ ֆեյսբուքում տեղադրված էդ ինտերնետային կայքերում զինվորական համազգեստը պղծող էդ երկոտանու էդ թռվռալը: Հիմա, ես չգիտեմ նա հայ ա, ինչ ազգ ա. Դա բացարձակ նշանակություն չունի: Եթե զինվորի համազգեստը պղծելը, եթե ես ասեմ դրա ականջը պետք ա ոլորել կամ չգիտեմ, դրան պետք ա պատժել, ինձ սրա համար պետք ա տանեն պատասխանատվության ենթարկե՞ն»:*[70]

Հոդվածի ընդունումից հետո Փինքի կողմից ոստիկանությանն է ներկայացվել 4 հաղորդում հանցագործության մասին՝ ԼԳԲՏ անձանց և նրանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և անձանց նկատմամբ բռնության կոչերի առնչությամբ: Ներկայացված հաղորդումներից երեքի առթիվ քրեական գործի հարուցումը մերժվել է հետաքննության մարմնի կողմից, մեկը՝ մնացել է անարձագանք: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները բողոքարկվել են վերադասության կարգով՝ գործի քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատախազին: Դրանցից երկուսը բավարարվել են, մեկը՝ մերժվել: Բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը բողոքարկվել է դատական կարգով: Ընթացքի մեջ գտնվող գործերի քննության առաջընթացի վերաբերյալ դեռևս տեղեկատվություն դիմումատուին չի ներկայացվել:

Պաշտոնատար անձանց ատելության խոսք, խտրական վերաբերմունք

Ատելության խոսքի վտանգավորությունը կարող է ավելի բարձր լինել՝ պայմանավորված դրա հեղինակի ինքնությամբ, նրա դերով և հասարակության շրջանում վարքագծով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում պաշտոնատար անձանց կողմից արտահայտված ատելությունը, քանի որ նրանք

69 Տե՛ս «Asekose am», «Բռնության քարոզ իրականացնող ցանկացած մարդ պետք է ստանա կոշտ հակահարված. Նիկոլ Փաշինյան», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=WRwc0VSxlZY (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
70 Տե՛ս «a1plus», «Զինվորի համազգեստը պղծողին, եթե ասեմ՝ պետք է ականջը ոլորել, պե՞տք է պատասխանատվության ենթարկվեմ», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=3H02puexADY (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

ի պաշտոնե հանդիսանում են որոշում կայացնող, հանրային քաղաքականություն մշակող մարմինների ներկայացուցիչներ, ըստ այդմ, նաև հասարակության շրջանում կարծիք ձևավորողներ: Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժող կոչեր կամ արտահայտություններ օգտագործելուց, որոնք կարող են հրահրել բռնություն, թշնամանք կամ խտրականություն: Նրանք նաև որոշիչ դեր ունեն անհանդուրժողականության, խտրական կարծրատիպերի և ատելության խոսքի դեպքերի դեմ խոսելու առումով:[71]

Հատկապես կարևոր դեր ունի Ազգային ժողովի ներկայացուցիչների խոսքը, նրանց վերաբերմունքը խոցելի խմբերի խնդիրների և փոքրամասնությունների նկատմամբ՝ պայմանավորված երկու հիմնական հանգամանքով: Նախ և առաջ, լինելով բարձրագույն ընտրովի մարմին, Ազգային ժողովի պատգամավորները, ենթադրաբար հանդիսանում են հասարակության շրջանում բարձր վարկանիշ և լսարան ունեցող անձինք: Եվ երկրորդ, Ազգային ժողովը, հանդիսանալով օրենսդիր մարմին, որպես հիմնական գործառույթ ունի օրենքների ընդունումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը, հետևաբար, այդ մարմնի ներկայացուցիչների մոտեցումը ուղղակիորեն ազդեցություն ունի օրինաստեղծ գործընթացի վրա:

Ինչպես նախկինում, 2020 թ. ևս արձանագրվել են պաշտոնատար անձանց կողմից նույնասեռական, երկսեռական և տրանս անձանց թիրախավորող ատելության խոսքի տարածման դեպքեր: Հատկանշական է, որ ստորև ներկայացված օրինակներում խոսքի հեղինակները *Ազգային ժողովի՝ մեծությամբ 2-րդ խմբակցության՝ «Բարգավաճ Հայաստանի» պատգամավորների կողմից*, որոնց վերաբերյալ օրինակներ են ներկայացված եղել նաև նախկին տարիների ընթացքում:[72] Սա պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ չնայած իշխանությունների որդեգրած ատելության խոսքի դեմ պայքարի քաղաքականությանը, դեռևս որևէ գործուն քայլ չի իրականացվել ատելության խոսքի հեղինակներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Հիշեցնենք, որ նախորդ տարվա ընթացքում նույն անձանց և նույն խմբակցության այլ ներկայացուցիչների կողմից հնչեցված ատելության խոսքի վերաբերյալ ոչ միայն հաղորդումներ էին ներկայացվել ոստիկանությանը, այլև՝ դիմում էր ներկայացվել Ազգային ժողով՝ Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու և պատգամավորների վարքագծին գնահատական տալու նպատակով, ինչը, փաստացի թողնվել էր անհետևանք:[73]

Որպես օրինակ ներկայացված է **ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանի** արտահայտությունները՝ մեջբերումներով: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

71 Տե՛ս Annual report of the United Nations High Commissioner for Human Rights, 2013, Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred: https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

72 Տե՛ս Զեկույց «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2019 թ., բաժին 5. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2020/05/lgbtreport2019hy.pdf (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
Հետազոտություն «Հայաստանում պետական պաշտոնյաների կողմից դրսևորված ատելության խոսքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2019 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/hatespeech_hy.pdf (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

73 Նույն տեղում, բաժին 5:

Արայիկ Հարությունյանի կողմից պարգևավճար ստանալու առնչությամբ, մասնավորապես՝ նա կատարել է հետևյալ գրառումը. *« ... Հանուն ինչի է պարգևատրվել ԿԳՄՍ նախարարը՝ սեռաշեղվածին պատվավոր ընդունելության արժանացնելու համար, թե կրթության ու մշակույթի ոլորտները սարգացնելու ... »*:[74]

Հիշեցնենք, որ Արայիկ Հարությունյանը 2018 թ. քաղաքացիների ընդունելության ընթացքում ընդունել էր նաև տրանսգենդեր անձի, ում կրթության իրավունքը խախտվել էր իր սեռական կողմնորոշման հիմքով:[75] Նույն հարցի շուրջ նա նախ գրել է. *«Սեռաշեղվածին պատվով հյուրընկալող, ոլորտը ծախողած, իր գործից բացարձակ անտեղյակ, գիտնականներին սովի մատնած ԿԳՄՍՀՊՋՌ նախարարը ստացել է մի քանի միլիոն դրամի աշխատավարձ և պարգևավճար, իսկ սահմանը պահող պայմանագրային զինծառայողը վարձատրվել է մի քանի հազար դրամով ... »*:[76]

Արայիկ Հարությունյանի վերաբերյալ նույն **խմբակցության ղեկավար Իվետա Տոնոյանը** հայտնել է հետևյալը. *«Ինչ վերաբերում է պարոն Հարությունյանին, ապա՝ մենք ևս մեկ անգամ վերահաստատում ենք, որ նրա հետագա պաշտոնավարման նպատակահարմարությունը չենք տեսնում, որովհետև մի նախարար, ով իր գործունեության ընթացքում աչքի է ընկել բացառապես տարատեսակ տրանսգենդերների հետ, հասկանալի չէ կրթության, գիտության, մշակույթի, թե՞ սպորտի ոլորտների նյուանսները քննարկելով, կամ Հայ եկեղեցու պատմություն առարկան վերացնելով»*:[77]

Գևորգ Պետրոսյանը անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանի անդամների փոփոխության գործընթացին, ինչը պայմանավորված էր 2015թ. ընդունված նոր Սահմանադրության հետևանքով առաջացած ճգնաժամով: Մասնավորապես, ՍԴ անդամների ընտրության ընթացակարգի փոփոխությամբ և նրանց դատավորներով փոխարինելու անհրաժեշտությամբ պայմանավորված այս գործընթացը նա ներկայացրել էր որպես «դավադրություն», ասելով, թե ՍԴ կազմի փոփոխության նպատակն է «ինչ-որ կոնվենցիաների» անխոչընդոտ վավերացումը, որոնց իբրև թե հասարակությունը դեմ է, ինչպիսին է, օրինակ, Ստամբուլյան կոնվենցիան:[78]

Հիշեցնենք, որ 2019թ. ընթացքում որոշ խմբերի կողմից Ստամբուլյան կոնվենցիայի դեմ սկսվել էր արշավ, որի ընթացքում կոնվենցիան ներկայացվում էր մանիպուլատիվ կեղծ տեղեկատվությամբ՝ նպատակ ունենալով հասարակության շրջանում ձևավորել կոնվենցիայի շուրջ բացասական վերաբերմունք՝ ներկայացնելով այն որպես նույնասեռականների պաշտպանության կոնվենցիա, որը

74 Տե՛ս «news.am», «Դասախոսներին ու ուսուցիչներին պահում են սովի մեջ, իսկ իրենք պարգևատրվում են. Գևորգ Պետրոսյան», 2020 թ. https://news.am/arm/news/553282.html (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
75 Տե՛ս «aravot.am», «Արայիկ Հարությունյանը չմեկնաբանեց տրանսգենդերի հետ հանդիպումը և իր հրաժարականի լուրը», 2020 թ. https://www.aravot.am/2018/11/12/992675/ (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
76 Տե՛ս «hayeli.am», Սեռաշեղվածին պատվով հյուրընկալող նախարարը ստացել է մի քանի միլիոն դրամի աշխատավարձ.... Պատգամավոր», 2020 թ. https://www.hayeli.am/?p=161706&l=am (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
77 Տե՛ս «analitik.am», «Իվետա Տոնոյանը խոսեց տրանսգենդերների հետ Արայիկ Հարությունյանի հանդիպումների մասին», 2020 թ. https://analitik.am/news/view/659891 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
78 Տե՛ս «168.am» ««Սահմանադրական փոփոխությունների հանրաքվե, ՍԴ-ի շուրջ իրավիճակը. քաղաքական մարտահրավերներ», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=e1bJenvlGRg&t=2412s (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

նպատակ ունի «երրորդ սեռ մտցնել» բացի արական և իգական սեռերից, թույլատրել նույնասեռական զույգերի ամուսնությունն ու նրանց կողմից երեխաներ որդեգրելը:[79]

Քննարկման է դրվել «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին հարցը, որով նախատեսվում է ծննդյան վկայականում քաղաքացու ազգանունից հետո ավելացնել «սեռը» բառը՝ որպես անկախ ծնողների փոխադարձ համաձայնությունից և ցանկությունից նշվող տվյալ:

ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյանի հարցին, թե կա արդյոք իրավիճակ, երբ անձի սեռը ծննդյան պահին հայտնի չի լինում, Գևորգ Պետրոսյանն արձագանքել է. *«Բայց ո՞նց կարա սեռը որոշելը հնարավոր չլինի, որոշելը ո՞րն ա. ... Բայց դրա համար մասնագետ պետք չի լինել: Լավ ո՞նց կարելի ա, տղեն տղայա, աղջիկը՝ աղջիկ. ... Այո, ծննդյան վկայականում պիտի գրվի՝ մարդն ինչ սեռի ա, որ եթե վաղը մյուս օր մարդ որոշի իր սեռը դավաճանել, իմանանք, որ ինքը դավաճան է: Եթե սեռը չենք գրում, մարդը կարող է ասել՝ «բայց Ձեզ ո՞վ է խաբել, որ ես տղա եմ, կամ աղջիկ եմ»: Մենք պետք է մեր սեռերը, սեռական կողմնորոշումներն ու պատկանելիությունը պահպանենք: Եթե ոչ, ուրեմն մեր ազգն ապագա չունի»*:[80]

Ատելության խոսքի հանրային այլ դրսևորումներ

Ատելության խոսքի նվազ վտանգավոր դրսևորումներ են մասնավոր անձանց կողմից հնչած արտահայտությունները, որոնք, սակայն, տարածվելով սոցիալական ցանցերով, որոնցից օգտվում են հազարավոր անձինք, ձեռք են բերում ավելի լայն լսարան:

Ներկայացված օրինակներում ատելության խոսքի հեղինակներ են հանդիսանում ինչպես քաղաքական գործիչներ, այնպես էլ՝ հասարակական միավորումների ներկայացուցիչներ:

Չնայած նրան, որ քաղաքական գործիչները որևէ պետական պաշտոն չեն զբաղեցնում, նրանք հանդիսանում են նախկին իշխանության բարձրաստիճան պաշտոնյաներ, հետևաբար ունեն լայն լսարան հասարակության շրջանում:

Նախկին ԱԺ փոխխոսնակի արձագանքը

Կրթության և գիտության նախարարությունը հանդես է եկել բարձրագույն ուսումնական հաստատություններում «Հայոց պատմություն» առարկան պարտադիր

79 Տե՛ս Ձեկույց «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2019 թ., բաժին 6. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2020/05/lgbtreport2019hy.pdf (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
80 Տե՛ս «iravunk.com», «Ծննդյան վկայականում պիտի գրվի՝ մարդն ինչ սեռի ա». Խորհրդարանը փոփոխություններ է առաջարկում համապատասխան օրենքում», 2020 թ. https://www.iravunk.com/?p=102622&l=am (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

դասավանդման ենթակա առարկաների ծրագրից հանելու նախաձեռնությամբ: **«Հանրապետական» կուսակցության անդամ, նախկին ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովն ասել է**. *«Քայքայիչ գործնեությունը տրանսգենդերության քարոզն է Ազգային ժողովից, քայքայիչ գործողությունն այն է, երբ սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները մտնում են ոստիկանության շենք և հարձակվում են ոստիկանների վրա: Քայքայիչ գործունեություն է, երբ երկրի վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը կառավարության շենքում ահաբեկիչների հետ է հանդիպում, ոտքի վրա խաբում է ժողովրդին»*:[81]

Էդուարդ Շարմազանովը նաև հետևյալ միտքն է արտահայտել. *«Դուք տեսե՞լ եք, օրինակ, ԱԺ «Իմ քայլը» խմբակցությունից որևէ մեկը կանգնի ասի, որ ինքը դատապարտում ա լսումների ժամանակ տրանսգենդերության քարոզը. Դուք լսե՞լ եք Փաշինյանի կողմնակիցներից կամ իրա քաղաքական թիմից, որ կանգնեն դրանց, չգիտեմ, դրանք տրանսգենդե՞ր են, թե՞ գալուբոյ են, որ մտան ոստիկանություն ու իրանց լկտի պահեցին...»*:[82]

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի[83] վերաբերյալ ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը գրել է. *«Կողմ քվեարկել հանրաքվեին՝ նշանակում է կողմ քվեարկել կոնվենցիայի վավերացմանը: Փաշինյանի ռեժիմը ԱԺ-ում դակեց հակասահմանադրական նախագիծ, որի համաձայն՝ հանրաքվեին կողմ քվեարկելու դեպքում դադարեցվում են ՍԴ նախագահի և դատավորների լիազորությունները: Հարկ եմ համարում հիշեցնել, որ Փաշինյանի այս հակասահմանադրական նախաձեռնությանն այո ասելը նշանակում է այո ասել հետևյալ կետերին. •Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը •Տրանսգենդերության քարոզին •Ազգային «կաղապարներից» հրաժարմանը •Ասֆալտին փռելու քաղաքականությանը •Սևերի և սպիտակների բաժանմանը •Արցախյան հարցում հայեցակարգի և իզմերի բացակայությանը •Քաղաքական ձերբակալություններին •Ներդրումների բացակայությանը •Եվ վերջապես, այո ասել բռնապետությանը»*:[84]

Հարկ է նշել, որ սահմանադրական փոփոխության նախաձեռնությունը պայմանավորված էր 2015 թ. Սահմանադրության փոփոխության արդյունքում սահմանադրական դատարանի անդամների ընտրության կարգի փոփոխության արդյունքում առաջացած սահմանադրական ճգնաժամով, որի հանգուցալուծման նպատակով առաջարկվում էր կասեցնել դատարանի՝ մինչև Սահմանադրության համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելը նշանակված անդամներին, և ընտրել նոր դատավորներ՝ նոր Սահմանադրությամբ նախատեսված ընթացակարգով: Ինչպես պարզ է դառնում գործընթացի ուսումնասիրությունից, դա ամենևին կապված չէր որևէ կոնվենցիայի վավերացման կամ սահմանադրականության հարցի քննության հետ: Այս պնդումը հերթական մանիպուլատիվ մեկնաբանությունն էր՝ ուղղված իշխանությունների դեմ, որը շրջանառվել է ոչ միայն նախկին իշխանության ներկայացուցիչների, այլ նաև ներկայում ԱԺ պատգամավորներ հանդիսացող անձանց կողմից (ինչպես ներկայացված է նաև նախորդ բաժնում):

81 Տե՛ս «iravunk.com», «Քայքայիչ գործունեությունը տրանսգենդերության քարոզն է Ազգային ժողովից», 2020 թ. https://iravunk.com/?p=103901&l=am (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
82 Տե՛ս «Aravot Daily», «Բայց ինչու՞ նյարդայնացավ. Շարմազանովը՝ Փաշինյանին», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=b1vt-3_XjAU (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
83 Տե՛ս «azatutyun.am», «Իշխող մեծամասնությունը առաջարկում է դադարեցնել Հրայր Թովմասյանի և ՍԴ վեց անդամի լիազորությունները», 2020 թ. https://www.azatutyun.am/a/30418411.html (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
84 Տե՛ս «hayeli.am», «Փաշինյանի ռեժիմը ԱԺ-ում դակեց հակասահմանադրական նախագիծ. Շարմազանով», 2020 թ. https://hayeli.am/?p=165230&l=am (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

Տարբեր հասարակական նախաձեռնությունների շահարկումները

Համացանցում «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից հայտարարություն է տարածվել՝ կապված ոստիկանության աշխատակիցների հետ անցկացվող դասընթացների հետ:, **«Վետո» հասարակական նախաձեռնության ներկայացուցիչ Նարեկ Մալյանն** այդ առնչությամբ կատարել է հետևյալ գրառումը. «*Հայաստանում քրեածին իրավիճակը կտրուկ աճ է գրանցել բոլոր ոլորտներում: ... Հիմա հարց, ի՞նչ է անում ոստիկանությունը... Դուք չեք հավատա, բայց ոստիկանությունում ԼԳԲՏ քարոզով զբաղվող սորոսական հկ-ները դասընթաց են իրականացնում: ... #Սորոսի_վաստակներ*»:[85]

«Վետո» հասարակական նախաձեռնությունը, որի ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության խոսքի տարածումը ներկայացված է ինչպես այս, այնպես էլ՝ նախորդ 2019թ. տարեկան զեկույցում: Այն, որ այս անձինք դեռևս շարունակում են անձանց սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնության, խտրականության կոչեր, նվաստացում, վիրավորանք պարունակող խոսքի տարածումը, ուղղակի հետևանքն է այն անպատժելիության մթնոլորտի, որ տիրում է երկրում և դեռևս փոփոխության չի ենթարկվում՝ չնայած այդ ուղղությամբ պետական մարմինների որդեգրած քաղաքականությանը: Այդպիսի արտահայտություններ պարունակող գրառումները զուգորդվում են իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածմամբ, որոշակի քաղաքական նպատակներով դրանց շահարկման փորձերով:

Նախաձեռնությունն այս անգամ տարածել է հայտարարություն, որում ասվում է. «*Վերլուծելով պետության զավթման գրեթե երկու տարին՝ արձանագրում ենք հետևյալը: Օլիգարխ Ջորջ Սորոսի գործակալները 22 տարի շարունակ զբաղված էին փողի դիմաց ստի ու կեղծիքի քարոզի միջոցով հանրությունը պառակտելով, ատելության գեներացիայով, պետության, իրավապահ մարմինների և դատական իշխանության նկատմամբ անվստահություն սերմանելով, մարդասպաններին և ահաբեկիչներին հերոսացնելով, բանակը բարոյալքելով, ադրբեջանասիրություն և ԼԳԲՏ քարոզելով, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ կեղտոտ արշավներ իրականացնելով:*

Այս ամենի արդյունքում երկու տարի առաջ օլիգարխ Ջորջ Սորոսի վարձկաններին հաջողվեց զավթել գործադիր իշխանությունը, իսկ ամիսներ անց՝ օրենսդիրը: Այսօր նրանք ցանկանում են տոտալ վերահսկողություն սահմանել նաև դատական իշխանության նկատմամբ:

Այժմ արդեն իշխանական լծակներին տիրապետող օլիգարխ Ջորջ Սորոսի վարձկանները փողի դիմաց շարունակում են առաջ տանել և ՀՀ քաղաքացիներին պարտադրել օտարերկրյա օրակարգը: ....

Այս ճգնաժամի լուծումը պետք է հստակ արձանագրվի քաղաքական բոլոր ուժերի կողմից՝ որպես օլիգարխ Ջորջ Սորոսի գործակալական ցանցի կողմից պետության զավթման դեմ ամբողջական պայքարի շրջանակներում իրականացվող գործողությունների շարք, որը պետք է հասկանալի ու կանխատեսելի լինի ՀՀ

85 Տե՛ս «Narek Malian» ֆեյսբուքյան օգտատեր. https://www.facebook.com/narek.malyan/posts/3172409632787246 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

քաղաքացիների և միջազգային հանրության համար:

Ճգնաժամի լուծումը պետք է իրականացվի խորհրդարանական և արտա-խորհրդարանական բոլոր առողջ ու իրապես մտահոգ ուժերի կողմից:

ՀՀ-ում գործող բոլոր քաղաքական ուժերը պետք է ընդունեն օլիգարխ Ջորջ Սորոսի վարձկանների կողմից պետության զավթման փաստը:

ՀՀ Ազգային ժողովի որոշման հայտարարության կամ բանաձևի միջոցով անհրա-ժեշտ է ճանաչել օլիգարխ Ջորջ Սորոսի գործակալական ցանցի կողմից պետության զավթման փաստը՝ ամրագրելով այդ զավթման մեխանիզմները, նախապատմությունը, բաղադրիչները, կատարողներին, մասնակիցներին և աջակիցներին:

Արգելել ՀՀ-ում օլիգարխ Ջորջ Սորոսի «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի գրասենյակի գործունեությունը՝ որպես հանցավոր և հակա-պետական կազմակերպություն:

Ուսումնասիրել և հրապարակել փողի դիմաց օլիգարխ Ջորջ Սորոսի հետ համա-գործակցած բոլոր կազմակերպությունների անվանումները և անհատներին, իրականացնել օտարերկրյա գործակալների լայնամասշտաբ լյուստրացիա և որպես հետևանք՝ արգելել նրանց զբաղեցնել պետական պաշտոններ:

Անհապաղ նախաձեռնել օտարերկրյա գործակալների վերաբերյալ օրենքի ընդունման գործընթացը:

Որպես հետևանք՝ քրեական պատասխանատվության ենթարկել օտարերկրյա օլիգարխի վարձկաններին, որոնք փողի ակնկալիքով որևէ մասնակցություն են ունեցել պետության զավթման գործընթացին»:[86]

Այսպիսով, այս նախաձեռնությունը փորձում է ԼԳԲՏ անձանց խնդիրները, դրանց բարձրաձայնումն ու իրավունքների պաշտպանությունը ներկայացնել որպես մի «դավադիր» հակապետական ծրագրի մաս՝ փորձելով հասարակության շրջանում ստեղծել բացասական տրամադրություն ԼԳԲՏ անձանց նկատմամբ, խորացնել անհանդուրժողականությունը: Միևնույն ժամանակ փորձ է արվում օրակարգ բերել իրավապաշտպան կազմակերպությունների գործունեության սահմանափակման և օրենքով ճնշումների նախատեսման հարցը:

Նույն նախաձեռնությունը մեկ այլ հայտարարությամբ հետևյալ կոչն է արել. *«Ձեր երեխաներին առաջարկվող միջոցառումների, ճամբարների, կրթական ծրագրերի, գրականության մեջ այլասերման քարոզի տարրեր նկատելու դեպքում հորդորում ենք անհապաղ կապ հաստատել «ՎԵՏՕ» հասարակական-քաղաքական շարժման հետ»*:[87]

Իսկ թե ինչպես է մեկնաբանվում «այլասերման քարոզ» արտահայտությունը, թողնված է կոչի հասցեատերերի հայեցողությանը, ում շրջանում պարբերաբար փորձ է արվում տարածել անհանդուրժող, խտրական մոտեցում որոշ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձանց նկատմամբ և խեղված պատկերացում ձևավորել «այլասերում» հասկացության շուրջ:

86 Տե՛ս «ՎԵՏՕ VETO BETO» ֆեյսբուքյան էջ, 2020 թ. https://www.facebook.com/VETOArmenia/photos/2538140883120669/ (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
87 Տե՛ս «ՎԵՏՕ VETO BETO» ֆեյսբուքյան էջ, 2020 թ. https://www.facebook.com/VETOArmenia/posts/2521326421468782 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

«Վետո» նախաձեռնությունը տարածել է նաև տեսանյութ, որում ներկայացված են տարբեր քաղաքական և հասարակական գործիչների, հասարակական կազմակերպությունների մասին լուրեր՝ Ջորջ Սորոսի «Բաց հասարակության հիմնադրամների» կողմից նրանց ֆինանսավորման և նրա կողմից կառավարվող լինելու մասին՝ փորձելով հասարակության շրջանում ձևավորել տեսակետ, թե որոշ իրավապաշտպաններ, հասարակական կազմակերպություններ կամ գործիչներ ղեկավարվում են հակապետական նպատակներ ունեցող մի կենտրոնից, և որ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները իրականում ունեն այլ նպատակ: Այդպիսով, հասարակությունը մարդու իրավունքների ընկալման և հավասարության մշակույթի ընդունման դեմ իր մեջ կառուցում է բարիեր՝ խորացնելով անհանդուրժողականության և ատելության մթնոլորտը: Այսպիսի տեսակետների հասարակության շրջանում տարածումը և մի դավադիր կենտրոնի մասին պատկերացման ձևավորումը հետագայում թույլ է տալիս քաղաքական շահարկումների համար՝ ցանկացած վարկաբեկման ենթակա նախաձեռնություն այդ կենտրոնի հետ կապելու միջոցով:

Այսպիսով, տարածված տեսանյութի վերջին մասում անդրադարձ է կատարվում 2019 թ. ցուցադրված «Հուզանք ու զանգ» ներկայացման և «Մել» ֆիլմի՝ պետության կողմից ֆինանսավորմանը՝ ասելով. *«Ստացվում է, որ սորոսական նախարարը (նկատի ունի Արայիկ Հարությունյանին) խանդավառությամբ ֆինանսավորում է անհասկանալի բովանդակությամբ, ինչ-որ առումով այլասերություն քարոզող ներկայացում և ֆիլմ, սակայն հրաժարվում է ֆինանսավորել, օրինակ, Վարազդատ թագավորի մասին պատմող ֆիլմը»*:[88]

Հայտնի է, որ «Մել» ֆիլմի համաֆինանսավորումը հաստատվել է 2019 թ. մայիսի 25-ին, մինչև Արայիկ Հարությունյանի նշանակումը որպես Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար:[89]

Տեսանյութում նաև ասվում է, որ հեղափոխությունից հետո Ստամբուլյան կոնվենցիան ընդունելու համար եղան սադրանքներ ԼԳԲՏ անձանց կողմից, այդ թվում՝ Շուռնուխի դեպքերը, «Իմ մարմինը իմ անձնականն է» գրքի քննարկումը, լրագրող Լյուսի Քոչարյանի կողմից կանանց նկատմամբ բռնությունների վերաբերյալ նամակների տարածումը և այլն՝ Կոնվենցիան սահուն կերպով օրակարգ բերելու համար: Ըստ տեսանյութի հեղինակի՝ բռնությունների վերաբերյալ այս հրապարակումները նպատակ են ունեցել ստեղծել միֆ, թե մենք ապրում ենք բռնարարների միջավայրում, և որ Կոնվենցիայի ընդունումը անհրաժեշտություն է:

Այսպիսով, տեսանյութի հեղինակը նախ և առաջ կասկածի տակ է դնում բռնության ենթարկված անձանց անկեղծությունը, իսկ նրանց նկատմամբ տեղի ունեցած բռնությունը դիտարկում է որպես նորմալ երևույթ՝ բռնարարներին դարձնելով իրավիճակի տուժող կողմ, հետևաբար նաև անլրջացնելով բռնության էությունն ու խրախուսելով անպատժելիությունը: Եվ չնայած նրան, որ Ստամբուլյան կոնվենցիայի դեմ տարվող այս արշավը ուղղված էր նոր իշխանությունների դեմ, հարկ է նշել, որ այն Հայաստանի կողմից ստորագրվել էր դեռևս մինչև «թավշյա հեղափոխությունը»:

88 Տե՛ս «VETO Movement», «Սորոսականները՝ ՀՀ իշխանությունում», 2020 թ.
89 Տե՛ս «fip.am», ««Արմնյուզի» հեռարձակած «հակասոռոսական» տեսանյութի մանիպուլյատիվ երանգները», 2020 թ. https://fip.am/9991 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

Մեկ այլ՝ **«Այլընտրանքային քաղաքապետարան» նախաձեռնությունը** կեղծ լուրեր է տարածել ԼԳԲՏ անձանց կողմից Ծաղկաձորում անցկացված կոնֆերանսի վերաբերյալ՝ տեղադրելով մի քանի տարվա վաղեմության լուսանկար, և ներկայացրել է, իբրև իշխանությունների վարած քաղաքականությունը ծառայում է ԼԳԲՏ համայնքի շահերին: Նախաձեռնության անդամ Սոնա Աղեկյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. *«Սույն թվականի մարտի 1-3-ը իմ հայրենիքի մի գեղատեսիլ անկյունում ընթանում է հայաստանյան ԼԳԲՏ համայնքի կոնֆերանսը: Մարտի 1-ին Նիկոլը կանխեց բոլորիս մուտքը Ծաղկաձոր, որպեսզի որևէ խոչընդոտ չառաջանա: Եղեք համարձակ»*:[90]

Նախաձեռնությունը նպատակ է ունեցել լայն հանրության շրջանում վարկաբեկել իշխող կուսակցությանը և նրանց առաջ բերած սահմանադրական փոփոխությունների օրակարգը, փաստացի իրականացնելով դրա դեմ հակաքարոզչություն՝ օգտագործելով ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա անհանդուրժողականության մթնոլորտը: Այս մասին է փաստում նշյալ գրառումը տարածած «politik.am» կայքում տեղադրված հոդվածը, որում ասվում է, թե իբրև կոնֆերանսի ընթացքում մի շարք օրակարգային հարցերի քննարկումից բացի ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները քննարկել են նաև առաջիկա հանրաքվեն: Նրանք վստահություն են հայտնել, որ եթե «ԱՅՈ»-ն հաղթի, ապա կարճ ժամանակում իրենք կկարողանան առավել ամուր հիմքերի վրա պաշտպանել իրենց իրավունքները, մասնավորապես՝ ամուսնության և երեխա որդեգրելու իրավունքները:[91]

Ազգային ժողովի օրակարգ է բերվել «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիան, որը կրկին դարձել է անհանդուրժողականություն և խտրականություն սերմանող խմբերի թիրախ: Կոնվենցիայի դեմ սկսվել է արշավ, տարածվել է կեղծիք պարունակող տեղեկատվություն դրա կիրառման շրջանակի և հետապնդած նպատակների շուրջ:

«Կամք» հասարակական կազմակերպությունը հետևյալ հայտարարությունն է տարածել. *«Այս կոնվենցիան դուռ է բացում սորոսական և ԼԳԲՏ-ական, ինչպես նաև նման այլ ՀԿ-ներին սողոսկել մեր դպրոցներ, հիվանդանոցներ ու նույնիսկ ուժային կառույցներ՝ պարտադրելու այլասերումը մեր հասարակության մեջ: Սրանով մեր ԱԺ-ում թաքնված հակահայկական ուժերի նպատակն է մեր երեխաներին և մեր ընտանիքներին խոցելի դարձնել»*:[92]

Ատելության մեկ այլ ալիք է տարածվել այն բանից հետո, երբ մոդելային գործակալության մոդելներին փողոցում լուսանկարել է մի անձ և նրանց նկարները տարածել համաձանցում՝ ներկայացնելով որպես տրանսգենդեր անձանց: Այդ առնչությամբ արվել են հետևյալ մեկնաբանությունները. *«Դուք էս*

90 Տե՛ս «Sona Aghekyan», ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/Sona80.aghekyan/posts/2647650868855487 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
91 Տե՛ս «politik.am», «ԼԳԲՏ ֆորումի ժամանակ վստահություն են հայտնել, որ եթե ԱՅՈ-ն հաղթի, ապա իրենք կկարողանան ամուսնանալ և երեխա որդեգրել», 2020 թ. http://politik.am/am/lgbt-forumi-zhamanak-vstahutyun-en-haytnel-vor-ete-ayo-n-haxti-apa-irenq-kkaroxanan-amusnanal-ev-erekha-vordegrel (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

92 Տե՛ս «yerkir.am», «Սա դուռ է բացում սորոսական և ԼԳԲՏ-ական ՀԿ-ների համար՝ սողոսկելու մեր դպրոցներ. «ԿԱՄՔ»-ը՝ Լանզարոտի կոնվենցիայի վավերացման մասին», 2020 թ. https://www.yerkir.am/news/view/199785.html (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

ստրուկ տրանսգենդերների ազատության համար էիք պայքարում հա՞ ... Բոլորը բոլորը էս երկրում պետք է այնպես անեն, որ սենց նկար էլ գոյություն չունենա, իսկ ում պատճառով էս իրավիճակնա, պիտի պռոստո քցել սրանց հետ մի սենյակում ու սրանց մի 10 հատ վիագրա տալ: Սա մեր երկրի խայտառակությունննա, սրանից մեծ խայտառակություն մեր երկրի մեր ժողովրդի ու մեր ինքնության համար չկա!»:[93]

«Լույս» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավար Հայկ Այվազյանը խեղաթյուրված և մանիպուլատիվ տեղեկատվություն է ներկայացնում. *«Երեխաներին պղծելու ու այլասերելու նպատակով տեղեկատվական-քարոզչական գործընթացը էլ ավելի համատարած և հիմնովին դարձնելու համար ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով վավերացման է ներկայացվել «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (այսուհետ Կոնվենցիա), որի 2-րդ հոդվածում նշված է, որ տուժածների (կոնվենցիայի իմաստով տուժածները երեխաներն են) իրավունքների աշտպանության համար ձեռնարկվող միջոցառումներն պետք է իրականացվեն առանց խտրականության՝ այդ թվում անկախ սեռական կողմնորոշումից:*

Այս հոդվածով կոնվենցիայի հեղինակները փաստում են, որ իբր կան նաև այլ սեռական կողմնորոշում ունեցող երեխաներ, ինչը կեղծիք է: Այլ սեռական կողմնորոշում ունեցող երեխա լինել չի կարող: Երեխային սեռական այլասերումներին կարելի հասնցել միմիայն նպատակային ուղղորդող քարոզչական աշխատանքներ իրականացնելու միջոցով:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պետությանը պարտավորեցնում է, որ երեխաները տարրական և միջնակարգ կրթություն ստանալու ժամանակ պետք է ստանան նաև համապատասխան սեռական դաստիարակություն: Քանի որ կոնվենցիայում ամրագրված է, որ կարող են լինել նաև այլ սեռական կողմնորոշում ունեցող երեխաներ, հետևաբար այդ սեռական դաստիարակության ծրագրերը տարրական և միջնակարգ դպրոցներում պետք է ներառեն նաև տեղեկատվություն միասեռականության և դրան վերաբերվող այլ թեմաների մասին, այդ թվում նաև սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը ընտրելու իրավունքի մասին: Երեխաների համար նախատեսված այդ սեռական դաստիարակության դասընթացները պետք է ներառեն նաև տեղեկատվություն այն մասին, որ այլ սեռական կողմնորոշումը և գենդերային ընտրությունը նորմ է, այլ ոչ թե այլասերում»:[94]

Դերասան Ռաֆայել Երանոսյանը, հարցազրույցի ընթացքում անդրադառնալով տրանսգենդեր անձանց, ասել է. *«ոնց կարա տղեն գնա կանացի շոր հագնի ու դուրս գա փողոց դառնա տենց. ... ես չգիտեմ, չեմ կարա. Պտի առնվազն քֆուրով պատասխանել էդ ամենինչին»*:[95]

93 Տե՛ս «Ankakh Hayastan», ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/vagrblogger/posts/2837289669732300 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
94 Տե՛ս «yerkir.am», «Ահազանգ բոլոր ծնողներին և հանցագործության մասին հաղորդում. Հայկ Այվազյան», 2020 թ. https://www.yerkir.am/news/view/199763.html (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
95 Տե՛ս «Hakazruyc», «Ռաֆայել Երանոսյանը հարսնացուի, ԼԳԲՏ համայնքի, մինչամուսնական սեռական հարաբերությունների մասին», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=yWIq91rdMTA (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

«Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության հիմնադիր նախագահ Խաչիկ Ասրյանը հանրային հավաքի ընթացքում հայտարարել է հետևյալը. *«Ես խորապես համոզված եմ, որ հայոց սուրբ հողում տեղ չունեն այլասերված մշակույթները, իսկ ԼԳԲՏ ներկայացուցիչները մեր իշխանության ժամանակ 24 ժամվա ընթացքում լքելու են Հայաստանի սուրբ հողը»*:[96]

Նշյալ օրինակներում ԼԳԲՏ անձինք և նրանց ներկայացուցիչները ներկայացվում են որպես «այլասերվածներ», «այլասերում տարածողներ, քարոզողներ, իսկ այս խմբի անձանց շահերի պաշտպանությունը՝ որպես «քարոզ»: Բազմիցս անդրադարձ կատարվել է այն հարցին, որ «տրանսգենդերության կամ նույնասեռականության քարոզ» արտահայտությունները ոչ միայն հակագիտական են իրավունքի տեսանկյունից ոչ որոշակի, այլ նաև հանգեցնում են հասարակության այս կոնկրետ խմբի նկատմամբ ատելության, այդ խմբին պատկանող անձանց մարգինալացման և անապահովության:

Ներկայացված օրինակներում հատկապես պետք է առանձնացնել որպես քաղաքական գործիչ հանդես եկող, իշխանության հայտ ներկայացրած անձանց, դերասանի և հասարակական նախաձեռնությունների արտահայտած մտքերը, որոնք ունեն իրենց լսարանը և հանրությանն են ներկայանում որպես տարբեր ոլորտներում հանրային գործունեություն ծավալող, հանրային խնդիրներ բարձրաձայնող մարմիններ: Նրանք այս հայտարարություններն արել են հանրային կերպով՝ մեծ ընթերցող ունեցող էջերում, հավաքների ընթացքում կամ ճանաչված հաղորդման ընթացքում, ինչն էլ ավելի վտանգավոր է դարձնում դրանց ազդեցությունը: Միևնույն ժամանակ, այդ հայտարարություններից ոչ մեկը իրավակիրառ մարմինների կողմից որևէ արձագանք չի ստացել:

Մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների հանրային խոսքը

Մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների կարծիքը ևս կարևոր նշանակություն ունի հասարակական դիրքորոշման ձևավորման համար, քանի որ նրանք հանրության առաջ հանդես են գալիս որպես մասնագետներ և ենթադրվում է, թե իրենց տեսակետը կամ ներկայացված վերլուծությունը պետք է ունենա որևէ գիտական հենք: Այնուամենայնիվ, հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ տարբեր ոլորտի մասնագետներ հանրային կերպով կարծիք կամ վերլուծություն են ներկայացնում, որոնք զուրկ են գիտական հիմնավորումներից, իսկ դրանցում ներկայացված, այպես կոչված, գիտական մոտեցումները առնչություն չունեն միջազգային չափանիշների հետ, ավելին՝ հաճախ հակասում են նաև միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և նորմերին:

Հատկանշական է, որ տրված գնահատականներում հաճախ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները ներկայացվում են որպես ինչ-ինչ «դավադիր» նպատակ հետապնդող մարմիններ և միֆեր են տարածում կազմա-

96 Տե՛ս «yerevan.today», «Ազատության հրապարակում պատռեցին ԼԳԲՏ համայնքի դրոշը», 2020 թ. https://yerevan.today/all/society/64539/azatoutyan-hraparakoum-hanrahavaq-irakanacnoghnery-patrecin-lgbt-hamaynqi-droshy (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

կերպությունների՝ կրթական ծրագրերին ներգրավվելու վերաբերյալ: Այս երևույթը վկայությունն է այն բանի, որ տարբեր գործիչների կողմից տարվում է հստակ ուղենշված քարոզչություն իրավապաշտպան կազմակերպությունների դեմ՝ որպես «դավադիր» ծրագրի մաս:

Բժիշկ-սեքսոլոգ Նարինե Ներսիսյանը շարունակում է հանդես գալ հակագիտական հայտարարություններով և վերլուծություններով, որոնց համար պատասխանատվության ենթարկելու արդյունավետ մեխանիզմներ գործնականում առկա չեն: Հայտարարություններին տրված չեն գիտական աղբյուրներին հղումներ, և դրանք հանդիսանում են սեփական կարծիքի հիման վրա կատարված մեկնաբանություններ: Նարինե Ներսիսյանը ֆեյսբուքյանն իր էջում գրել է. *«Հոմոսեքսուալ վարք դրսևորող անձի արժեքային համակարգում առաջնային ու ամենագլխավոր տեղը զբաղեցնում է հաճույքը: Սեռական զգայական հաճույքը այս անձնավորությունների համար գերագույն արժեք է և կյանքի շարժիչ ուժ: Հոմոսեքսուալ վարք դրսևորող անձիք ի վիճակի չեն երկարատև հարաբերությունների, սովորաբար նրանց կապն ընդհատվում է, երբ սիրահարվածությունն անցնում է, սեռական հետաքրքրությունը սպառվում է, սեռական հաճույքի սկզբնական ուժգնությունը խամրում է: ...*

Քանի որ սեռական գրգռման ձեռք բերումը նույն սեռի ներկայացուցչի հետ դյուրին է, այս անձնավորությունները հաճախ մտածում են, որ հակառակ սեռի հետ անհնար կլինի գրռվելը ու սխալվում են: Նրանց օրգանիզմն ի վիճակի է սեռական գրգռման արձագանքման հակառակ սեռի ներկայացուցչի հետ, եթե ներքուստ այդ ռեակցիան սաբոտաժի չենթարկեն:

Երկու սեռերի հետ սեռական գրգռման ունակ լինելու դեպքում դրսևորվում է բիսեքսուալ վարքագիծ: Սա նույնպես ինքնություն չէ, այլ վարքագիծ:

Սեռական գրգռման դժվարությունները հակառակ սեռի հետ ոչ թե ինքնության խնդիրներ են, այլ վարքագծային սովորությունների կարծրության խնդիր»:[97]

Բժիշկ-սեքսոլոգին անհագստացնող մյուս հարցը վերաբերում է դպրոցում սեռական կրթության դասավանդումն իրականացնողներին. *«Եթե այդ կրթությունը պատրաստվում են իրականացնել ՀԿ-ները, որոնք ֆինանսավորվում են այլ շահագրգիռ կենտրոններից, պատկերացնո՞ւմ եք՝ 6 տարեկանից երեխային սովորեցնելու են, որ «Ձեր սեռը սանդղակ է, որ դու տղա ես, բայց մի քիչ էլ աղջիկ ես»: Նման բաներ կարող է սովորեցնեն: Դա նշանակում է՝ խեղել երեխային: Դա արդեն երեխայի հանդեպ սեռական շահագործում է: Դա կարող է լայն իմաստով լինել մանկապղծություն: Անպայման չէ ձեռքով կպնել երեխայի սեռական օրգանին, խոսքով էլ կարող ես պղծել երեխային: Դա նույնն է, որ մտնես առաջին դասարան ու սկսես խոսել մարդասպանների մասին, հանցագործների մասին»*:[98]

Որոշ մասնագետների կողմից հանրությանը տրամադրվում են գիտական տեքստերին հակասող տեղեկություններ՝ առանց որևէ հստակ հղումների

97 Տե՛ս «Dr. Narineh Nersisyan» ֆեյսբուքյան էջ, 2020 թ. https://www.facebook.com/sex.and.couple.therapy.Dr.NarineNersisyan/posts/1877912829010018 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
98 Տե՛ս «168.am», «Առաջին դասարանում սեռական բռնության մասին դասավանդելը նույնն է, որ մտնես առաջին դասարան ու սկսես խոսել մարդասպանների մասին. բժիշկ-սեքսոլոգ», 2020 թ. https://168.am/2020/05/03/1297298.html (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

այլընտրանքային գիտական հիմնավորման: Այդպիսի հայտարարություն է արել նաև **բժիշկ-սեքսոպաթոլոգ Մնաց Փահլևանյանը**՝ ասելով. *«#Հոմոսեքսուալության կարող է բերել նյարդային համակարգի տիպիկ ախտահարումները: Կոկաինով խրոնիկ թունավորվող հետերոսեքսուալ տղամարդկանց մոտ կարող է ի հայտ գալ #հոմոսեքսուալ հակումներ, որն անհետանում է կոկաինի ընդունումը դադարեցնելուց հետո»*:[99]

Բժիշկ Զաքար Խոջաբաղյանն անդրադարձել է ԵԽ Լանզարոտի կոնվենցիային («Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին») և ներկայացրել է իր մեկնաբանությունը սեռական շահագործումից պաշտպանվելու ուղղությամբ նախատեսվող իրազեկմանը, մասնավորապես, ասելով. *«Ավելի կոնկրետ, սահմանվում է որ ՏԱՐՐԱԿԱՆ և միջին դասարաններում պետք է երեխաների հետ "կրթական-ինֆորմատիվ" աշխատանքներ տարվեն, նրանց բացատրելով սեռական շահագործման ենթարկվելու հնարավոր ռիսկերը և պաշտպանվելու ձևերը:*

Այսինքն ի՞նչ, պիտի գնան դպրոցում 6-7 տարեկան երեխային ասեն, որ եթե հարազատդ քեզ գրկում է՝ ուշադիր կլինես էս-էս-էս բաների՞ն: Փաստացի մի 100 կամ 1000 հանցագործի (ասում են, որ նման դեպքեր եղել են) դատելու, օրենքով կռտելու փոխարեն, մի ամբողջ սերունդ դարձնում են հոգեբանորեն խեղված՝ ստիպելով մտասևեռվել այդ թեմայի վրա, և իր հարազատությանը վերաբերվել որպես պոտենցյալ մանկապիղծ:

Եթե էս ամենին էլ գումարում ենք այն, որ այդ թեման ակտիվ շրջանառողները հայտնի ՀԿ-ներն են, որոնք այլասերության քարոզով են զբաղված, ապա է՛լ ավելի է հաստատվում անհանգստությունների առիթն այս հարցում»:[100]

Կոնվենցիայի վավերացումից հետո նա գրել է. *«Աստված ոչ անի՝ գեթ մեկ դեպք, երբ սորոսական, կամ սեռաշեղված դեմքերից մեկը դպրոց մտնի՝ երեխաներին քողարկված կամ բացահայտ այլանդակություն քարոզելու կամ, օգտվելով ստեղծված օրենսդրական հնարավորություններից, իրենց կեղտոտ ծրագրերն իրականացնելու փորձ անի. ինչպես Նիկոլ Փաշինյանը մի անգամ նշել էր, թե տրանսգենդեռը իր անձնական պաշտպանության ներքո է և նրա մասին ֆիլմ չֆինանսավորելը խարան կլիներ Հայաստանի ճակատին (սրան ժամանակին ինչ պետք էր ասվել էր), հիմա ես եմ ընդգծում Աստված ոչ անի, ձեր քվեարկությունից հետո մի խանգարված կամ ապազգային արարած մոտենա երեխաների կրթությանը՝ դա որպես խարան կմնա ՁԵՐ ԲՈԼՈՐԻ ՃԱԿԱՏԻՆ»*:[101]

Նույն անձը անդրադարձել է նաև «Սոցիոսկոպ» հասարակական կազմակերպության նախկին նախագահ Աննա Ժամակոչյանի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար նշանակվելուն, ասելով. *«Էլ ինչի եք ձևեր թափում. Միանգամից սոցապ նախարարությունը անվանեք լգբտ նախարարություն ու կցել ԿԳՄՍ-ին»*:[102]

99 Տե՛ս «Սեքսոպաթոլոգի էջ Մնաց Փահլևանյան» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/txur.ej.7/posts/918723178640466 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
100 Տե՛ս «Զաքար Խոջաբաղյան» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/zakar.khojabaghyan/posts/3179243458761724 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
101 Տե՛ս «analitik.am», «Ուրեմն ուշադիր լսեք. Աստված ոչ անի գեթ մեկ դեպք, երբ սորոսական, կամ սեռաշեղված դեմքերից մեկը դպրոց մտնի. Զաքար Խոջաբաղյան», 2020 թ. https://analitik.am/news/view/620216
102 Տե՛ս «Զաքար Խոջաբաղյան» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/zakar.khojabaghyan/posts/3347711338581601 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

2020 թ. մայիսի 31-ին ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչեց Լանզարոտի կոնվենցիայով ամրագրված պետության պարտավորությունները՝ ուղղված երեխաներին սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից պաշտպանելուն:

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանն այս առնչությամբ կարծիք է հայտնել, թե Սահմանադրությանը համատասխան լինելը դեռ չի նշանակում, որ այն կարող է անվերապահորեն վավերացվել Ազգային ժողովի կողմից, մասնավորապես, ասելով. *«Այո, Սահմանադրական դատարանը դրական որոշում է կայացրել, սակայն դրանից բնավ չի բխում, որ Լանզարոտի կոնվենցիան անվերապահորեն ենթակա է վավերացման կամ դրա հիման վրա անարգել կարող են ընդունվել ներկայումս գործադիր իշխանությունում ձևավորված պատկերացումներին համապատասխան, կամայական մեկնաբանությունների տեղիք տվող օրենքներ:*

Իհարկե, կարելի էր ՍԴ որոշմամբ առավել խիստ ու կանխատեսելի դիրքորոշումներով անդրադառնալ Լանզարոտի կոնվենցիայի որոշ խնդրահարույց դրույթներին, հատկապես, կապված տարրական կրթության ընթացքում սեռական շահագործման և նմանաբնույթ այլ հարցերի լուսաբանման, սեռական կողմնորոշման հասկացությունները բացառապես Սահմանադրության ոգուն համահունչ ընկալելու և կիրառելու հարցադրումներին, սակայն անհրաժեշտ կամքի առկայության դեպքում հիշյալ իրավական դիրքորոշումներն էլ են բավարար»:[103]

Պահեստազորի մայոր Արամ Բաղիյանը գրառում է կատարել՝ կապված ԼԳԲՏ անձանց պաշտպանությամբ զբաղվող մարմինների և դրանց կողմից երեխաների պաշտպանության խնդրին. *«Նմանապես, եթե երեխաների պաշտպանության թեմաներով զբաղվեր, օրինակ, հայ ծնողների ասոցիացիա կամ նմանատիպ մի այլ կառույց, ինչպես, որ հենց Սարյանն էր արվեստի գլուխգործոցներ հեղինակում, երեխաների պաշտպանության խնդիրն այլ տեսանկյունից կդիտարկվեր, բայց, քանի որ նման հարցերով զբաղվում են ԼԳԲՏ շահերը սպասարկողները, դա լրիվ այլ ենթատեքստ է պարունակում և խնդիր է»*:[104]

Զինվորական կոչում ունեցող անձանց կողմից ԼԳԲՏ համայնքի նկատմամբ բացասական վերաբերմունքի սերմանումը նույնպես կարելի է համարել բարձր վտանգավորության, քանի որ բանակում՝ որպես փակ հաստատություն, ԼԳԲՏ անձանց նկատմամբ հավասար, ոչ խտրական վերաբերմունքի ապահովումը դժվարություններ է պարունակում, իսկ պետությունը դեռևս արդյունավետ քայլեր չի ձեռնարկում զինվորական հրամանատարության շրջանում հանդուրժողականության բարձրացման և ԼԳԲՏ անձանց իրավունքների ապահովման ուղղությամբ:

Այս անձինք չեն սահմանափակվել միայն խտրականություն և ատելություն սերմանող խոսքի տարածմամբ, այլ նաև հանդես են եկել «Հայաստանյայց

103 Տե՛ս «livenews.am», «Լանզարոտի կոնվենցիան վավերացրած երկրներում ծնողները հասկացել են, որ գեղեցիկ ու խոստումնալից բառերի տակ թաքնված էին անկանխատեսելի վտանգներ», 2020 թ. https://livenews.am/press/2020/41399/07/20/20/ (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
104 Տե՛ս «yerkir.am», «Վավերացվելիք Լանզարոտեի «լուսավոր» կոնվենցիայի ենթատեքստն ու պաշտպանական թաղանթը», 2020 թ. https://www.yerkir.am/news/view/198716.html (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

առաքելական սուրբ եկեղեցու, հայոց լեզվի, մշակութային ժառանգության, ընտանիքի և մանկության պաշտպանության հիմունքների մասին» օրենքի նախագծի առաջակով:[105] Նախագիծը, որն ըստ Էության, հանդիսանում է ավանդույթները մարդու իրավունքներից և հավասարությունից վեր դասելու տենդեցի արտահայտում, մշակվել է մի խումբ իրավաբանների, հոգեբանների և ռազմագետների կողմից: Վերջիններս ձևավորել են «Ազգային արժեքների պաշտպանություն» նախաձեռնությունը՝ իրենց հռչակելով ազգային արժեքների պաշտպաններ «այլասերումից»: Նախաձեռնության հիմնադիրներն են՝ իրավաբանական գիտությունների դոկտոր Գևորգ Դանիելյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանը, ռազմական փորձագետ, պահեստազորի գնդապետ Հայկ Նահապետյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Նալչաջյանը, պատմագիտության թեկնածու Ռուբեն Մելքոնյանը, պ.գ.դ., իրավաբական գիտությունների թեկնածու, Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Որպես ներկայացված օրենքի նախագծի հիմնավորում նշված է, որ նույնասեռ զուգընկերներին ընտանիքի անդամների հետ հավասար կարգավիճակ տալը խտրականության կհանգեցնի, քանի որ համատեղ բնակվող նույնասեռ զուգընկերները ավելի լայն արտոնություններ ձեռք կբերեն, քան համատեղ բնակվող այլ անձինք: Հետևաբար, ըստ նախագծի հեղինակների, պետք է օրենքով նախատեսվի ընտանիք կազմելու և ամուսնության իրավունքի սահմանափակում: Նախաձեռնության հեղինակների հրավիրած ասուլիսի ընթացքում նրանց հնչեցրած հայտարարութունները կրկին անդրադառնում են Ստամբուլյան և Լանզարոտի կոնվենցիաներին և դրանցից անչափահասների և «ավանդական արժեքների» պաշտպանությանը:[106]

Այսպիսի հիմնավորումը ակնհայտորեն խտրական է, հետևաբար օրենքի նախագիծը ի սկզբանե չի կարող համարվել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Եթե անգամ, անձանց հավասարությունը օրենքով սահմանափակող այսպիսի նախագիծ ներառվի Ազգային ժողովի օրակարգում, ապա՝ այն ենթակա է մերժման միայն այն պարզ պատճառով, որ հակասում է իրենցից գերակա իրավական ակտին՝ Սահմանադրությանը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նաև շարունակել է իր ակտիվ գործունեությունը Լանզարոտի կոնվեցիայի վավերացման դեմ պայքարում՝ բարձրաձայնելով դրա բացասական կողմերը՝ կապված երեխաների սեռական դաստիարակության հետ:[107] Հարկ է նշել, որ փաստաբանների պալատի նախագահի կողմից հասարակության որևէ հատկանիշ ունեցող խմբի թիրախավորումը կարող է հանգեցնել խտրականության ենթարկվող խմբի անպաշտպանության՝ պայմանավորված այն հանգամանքով, որ փաստաբանների պալատը այն մարմինն է, որի պարտադիր անդամ են հանդիսանում փաստաբանական աջակցություն ցուցաբերելու արտոնագիր ունեցող բոլոր

105 Տե՛ս «azgayin.am», «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, հայոց լեզվի, մշակութային ժառանգության, ընտանիքի և մանկության պաշտպանության հիմունքների մասին» օրինագիծ, 2020 թ. https://azgayin.am/օրինագիծ-2/ (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

106 Տե՛ս «5-րդ ալիք / 5 TV» ֆեյսբուքյան էջ, «Օրենքով արգելել երկու տղամարդու կամ երկու կնոջ ամուսնությունը», 2020 թ. https://www.facebook.com/watch/?v=968924516922958 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

107 Տե՛ս «Արա Զոհրաբյան» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=2734981220066604&id=100006642580999 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

մասնագետները: Հետևաբար, փաստաբանների պալատի նախագահի խոսքի ենթադրյալ ազդեցության գոտին ոչ միայն ընդհանուր առմամբ քաղաքացիներն են, այլ նաև հենց փաստաբանական հանրույթը, որը կարող է կաշկանդված լինել անձանց իրավական աջակցություն ցույց տալու հարցում:

Մասնագիտական գործունեությունը կարգավորող օրենսդրության և/կամ գործունեության ընթացքում էթիկայի կանոնների բացակայությունը հանգեցնում են մասնագետների կողմից էթիկապես ոչ տեղին հրապարակային արտահայտությունների, որոնք, լինելով գիտականորեն չհիմնավորված, հասարակության շրջանում կարող են առաջացնել թյուրընկալում և անհանդուրժող վերաբերմունք: Ատելության խոսքը կարգավորող օրենսդրության բացակայությունը թույլ է տալիս խուսափել պատասխանատվությունից այնպիսի արտահայտությունների համար, որոնք հանդիսանում են միջամտություն անձի մասնավոր և ընտանեկան կյանքին՝ խախտելով նրանց հոգեկան ամբողջականությունը և նրանց դնելով հասարակության մյուս անդամների համեմատ անբարենպաստ, խոցելի վիճակում:

Ատելության խոսքը մեդիայում

Խնդիրը, որ Հայաստանում գործող լրատվամիջոցները հաճախ տարածում են կեղծ, չհաստատված և/կամ մանիպուլատիվ լուրեր, որոնք հակասում են լրագրողական էթիկայի կանոններին, բարձրաձայնվել է վերջին մի քանի տարիներին: Ավելին, հաճախ լրատվամիջոցներով տարածվող խոսքը անցնում է արտահայտման ազատության սահմանները՝ պարունակելով խտրականության, թշնամանքի հրահրում հատկապես ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Հարկ է նշել, որ վերոնշյալ բաժիններում նկարագրված օրինակների մեծամասնությունը կրկին լուսաբանվել է լրատվամիջոցների կողմից՝ չենթարկվելով ատելության խոսքը սահմանափակող վերահսկողության: Լրատվամիջոցներով տարածվող խոսքը, որտեղ էլ այն ի սկզբանե արտահայտված լինի, ստանում է առավել լայն տարածում հասարակության շրջանում և ազդում հասարակական տրամադրության վրա: Գաղտնիք չէ, որ լրատվամիջոցները, պայմանական անվանվելով չորրորդ իշխանություն, ունեն լայն կարծիք, մթնոլորտ և վերաբերմունք ստեղծելու կարողություն, ինչն էլ դրանց հաճախ դարձնում է գործիք քաղաքական տարբեր ուժերի կողմից:

Այլ հարթակներում հնչած խոսքի լուսաբանումից բացի, լրատվամիջոցներով տարածվում են նաև դրանց խմբագրական վերլուծությունները, որոնք նույնպես կարող են արտահայտման խոսքի չարաշահում որակվել:

«Analitik.am» կայքի գլխավոր խմբագիր Անի Հովհաննիսյանը, ով հանդիսանում է «Վետո» նախաձեռնության անդամ, պարբերաբար հանդես է գալիս ստահոդ լուրերի տարածմամբ. *«Ես հասկանում եմ, որ ՀՀ-ն վավերացրել է մի շարք միջազգային փաստաթղթեր, ընդունել օրենքներ, որտեղ կա գենդերային հավասարություն ձևակերպումը՝ օգտագործելով այն կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության իմաստով, բայց խնդիրն այն է, որ ինչ-որ մի օր հենց այդ ձևակերպման շնորհիվ հնարավոր է լինելու անցկացնել*

թե միասեռականների ամուսնության մասին օրենք, թե տրանսգենդերների և այլ գենդերների մասին ուսուցողական ծրագրեր դպրոցներում և այսպես շարունակ: «Ստամբուլյան կոնվենցիան» վավերացնելու դեպքում էլ միասեռականների, տրանսգենդերների և այլ գենդերների քարոզչության իրականացումը երեխաների շրջանում, այսպես կոչված, երեխաների իրական գենդերը բացահայտելուն ուղղված ուսումնական ծրագրերի ներդրումը և այլն, ժամանակի հարց է լինելու, քանի որ մենք արդեն իսկ ընդունել ենք գենդերային հավասարություն ասվածը:

Սորոսականները հենց գենդերային հավասարություն տերմինն են օգտագործում, քանի որ յուրաքաչյուր օրենք, որտեղ կա այս տերմինը շատ հեշտությամբ հետագայում հնարավոր կլինի կիրառել թե տրանսգենդերներին, թե այլ գենդերներին տարատեսակ իրավունքներ և արտոնություններ շնորհելու, երեխաների շրջանում քարոզչություն անելու, արական և իգական սեռերի հասկացությունը խեղաթյուրելու և այլ կեղծ ու վտանգավոր թեզեր առաջ բերելու համար:

Հ.Գ. Հեռու պահեք ձեր երեխաներին Սորոսի հիմնադրամի հետ առնչվող յուրաքանչյուր կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներից, սեմինարներից, ծրագրերից!!! Ուշադիր հետևեք դպրոցներում ներմուծված նոր ծրագրերին և մեթոդներին»:[108]

Անի Հովհաննիսյանը ակտիվ կերպով քննադատել է նաև Լանզարոտի կոնվենցիայի վավերացումը Ազգային ժողովի կողմից՝ հրապարակելով կողմ քվեարկած պատգամավորների ցուցակը: Նախորդ օրը նա կատարել էր հետևյալ գրառումը. *«Վաղը քվեարկության ժամանակ պարզ կդառնա, թե ովքեր են ՀՀ Ազգային ժողովում բացահայտ կամ մինչ այդ պահը քողարկված սպասարկում սորոսական գործակալական ցանցի շահերը»*:[109]

Լրատվամիջոցի խմբագիրը այս գրառումներով ոչ միայն պիտակավորել է մարդու իրավունքների պաշտպանության շահից բխող կոնվեցիայի ջատագովներին՝ նրանց վերագրելով իրականության չհամապատասխանող թաքնված շարժառիթներ, այլ նաև նրանց դարձրել է հասարակության անհանդուրժողականության թիրախ: Նա մի կողմից կեղծ տեղեկատվություն է տարածել իրավապաշտպան կազմակերպությունների վերաբերյալ՝ նրանց վերագրելով հասարակության զայրույթը հարուցող գործունեություն, մյուս կողմից այդ կեղծիքի հիման վրա իր լսարանին կոչ է արել մերժել այդ կազմակերպությունների ծառայությունները:

Անի Հովհաննիսյանն անդրադարձել է նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակած կրթական չափորոշիչներին՝ «բացահայտելով» դրանց վտանգավոր թաքնված նպատակները: Ստորև ներկայացված են հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսում-առության վերջնարդյունքներից վերցված դրույթները և դրանց տրված մեկնաբանությունները.

«6-10 տարեկան երեխաների համար.

1. Ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, գիտակցի դրանց դերը աշխարհաճանաչողության գործում:

Վտանգն՝ այս մասով մասնագետները փաստում են, որ երեխաներին զգայարանների վրա կենտրոնացնելը կարող է բերել խեղումների և վաղ տարիքից

108 Տե՛ս «analitik.am», «Գենդերային հավասարության հնարավոր վտանգավոր հետևանքները. Անի Հովհաննիսյան», 2020 թ. https://analitik.am/news/view/594553 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
109 Տե՛ս «analitik.am», «Պատգամավորներ, ովքեր սպասարկում են սորոսական ցանցի շահերը / անուններ/», 2020 թ. https://analitik.am/news/view/620141 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

սեռական կյանքով ապրելու ցանկություն առաջացնել:

2. Ցանկության դեպքում արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը:

Վտանգը՝ հետաքրքիր է յուրահատուկ բառի կիրառումը, որը մի շարք երկրներում ասոցացվում է սեռական կողմնորոշման հետ՝ տրանսգենդերները, միասեռականները համարվում են յուրահատուկ, և այդ գաղափարախոսությունը հենց դպրոցական տարիքից է ներդրվում: Վտանգավոր է նաև երեխաներին վաղ տարիքից զգացմունքների վրա կենտրոնացնելը:

10-15 տարեկան երեխաների համար.

1. Կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկությունները և հակումները:

Վտանգը՝ երեխաներին պետք է պատմեն գոյություն ունեցող հակումների մասին, որպեսզի նրանք կողմնորոշվեն, թե ինչ հակումներ ունեն և գիտակցեն դրանք՝ այսինքն 10 տարեկանից սկսած երեխաներին կենտրոնացնելու են սեռական տարբեր կողմնորոշումների վրա՝ իբր թե, որ վերջիններս պարզեն և գիտակցեն իրենց զգացմունքներն ու հակումները:

2. Տեղեկացված և պատրաստ լինի հասունացման շրջանում իր և տարեկիցների հետ կատարվող ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխություններին, ունենա ինքնախնամքի, հիգիենայի հմտություններ:

Վտանգը՝ սա նշանակում է, որ պատմելու են երեխաներին սեքսի, պահպանակների օգտագործման, հղիության ընդհատման ձևերի, սեռավարակների մասին, ինչը, մասնագետները փաստում են, որ կնպաստի վաղ տարիքից սեռական կյանքով ապրելու ցանկության ձևավորմանը:

3. Դիմակայի ճնշումներին և իմանա՝ ում դիմի աջակցության և խորհրդատվության համար:

Վտանգը՝ բնական է, որ դպրոցներին կից կստեղծվեն տարբեր կառույցներ, որոնք կսկսեն աշխատանքներ տանել երեխաների հետ, ինչպես որոշ երկրներում է, որտեղ երեխաներին առանց ծնողների գիտության իբր հոգեբանական աջակցություն են տրամադրում, ապա որոշում են, որ երեխան տրանսգենդեր է, ընտանիքում ճնշվում է և սկսում են հորմոնալ դեղերի միջոցով սեռափոխել երեխաներին՝ 10 տարեկանից սկսած»:[110]

Մեջբերումն ամբողջական է՝ ուսումնառության վերջնարդյունքների խեղաթյուրման տրամաբանությունը ցուցադրելու նպատակով: Հեղինակը, փաստացի, հանգել է նշված դրույթների հետ որևէ տրամաբանական առնչություն չունեցող եզրակացությունների:

«Կանանց ռեսուրսային կենտրոն»-ՀԿ-ի կողմից կազմակերպվել է երկամսյա ծրագիր 13-18 տարեկան աղջիկների համար, որի շրջանակներում նախատեսվել է ուսուցանել զորեղացում, շփման և ինքնազարգացման կարողու-

110 Տե՛ս «analitik.am», «Արժեհամակարգի վերջնական քանդումը հենց դպրոցից սկսելու հիմքերը դրվում են. Անի Հովհաննիսյան», 2020 թ. https://analitik.am/news/view/637913 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

թյուն, ինքնընկալում, ինքնագնահատականի բարձրացում, ինքնախնամք, ծնողների հետ հարաբերություններ, քննարկել ապահով միջավայրի ստեղծման հարցը: Անի Հովհաննիսյանը մի տեսաուղերձ է նվիրել այս հարցին՝ ակնհայտորեն կանանց պաշտպանության խնդիրը մղելով երկրորդ պլան և առաջ բերելով ինչ-որ մտացածին տեսություններ այդ դասընթացների թաքնված նպատակների մասին: Ներկայացված դավադրությունների տեսությունը հիմնավորելու նպատակով «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի նախագահ իրավապաշտպան Լարա Ահարոնյանի նկատմամբ փորձ է արվում ձևավորել բացասական վերաբերմունք՝ իրականությանը չհամապատասխանող լուրեր տարածելով նրա գործունեության վերաբերյալ: Օգտագործելով խտրական և անհանդուրժողականություն սերմանող արտահայտություններ՝ նա հստակ թիրախավորել է անձին՝ պայմանավորված վերջինիս իրավապաշտպան գործունեությամբ: Դասընթացների մասին Անի Հովհաննիսյանն ասել է. «... *Երեխաների շրջանում այդ ԼԳԲՏ գաղափարների տարածումը, այդ տրանսգենդերիզմի քարոզը երեխաների շրջանում. Սա լուրջ վտանգ է, որը կարող է սպառնալ նաև Հայաստանին և կսպառնա, եթե մենք քայլեր չձեռնարկենք և այդ սորոսականների ծրագրերը կարողանան իրագործվել, ինչը մեծ վտանգ է ներկայացնում:*

Ինչպես կարող է մի կին, ով քարոզում է միասեռականություն, ով փաստացի իր ամբողջ հասարակական գործունեության ընթացքում քարոզել է բացառապես տրանսգենդերության, միասեռականության և այնպիսի գաղափարներ, որոնք քարոզում են հղիության ընդհատում, միասեռականություն, այլասերվածություն. Ինչպես կարող է այդ կինը 13-18 տարեկան աղջիկների համար կազմակերպել երկամսյա դասընթացներ, սեմինարներ: Ես ուղղակի այս լայվով ուզում եմ հորդորել բոլոր ծնողներին, ովքեր հետևում են իրենց երեխաներին և չեն ցանկանում, որպեսզի իրենց երեխաները ենթարկվեն ոչ լավ ազդեցությունների, հետևեն, որպեսզի իրենց աղջիկ երեխաները հեռու մնան նմանատիպ սեմինարներից, քննարկումներից և պուպուշ անվան ներքո կազմակերպվող տարբեր, շատ կասկածելի միջոցառումներից: Սա առաջինն էր, և երկրորդը, տրանսգենդերության հարցի մասով ես դեռևս կխոսեմ և կբացեմ այլ փակագծերը, թե ինչպես են պատրաստվում սերոսականները ներդնել այնպիսի ծրագիր, որը նախադպրոցական, ինչպես նաև դպրոցական երեխաների շրջանում արդեն կսկսի տարածել տրանսգենդերության գաղափարը»:[111]

«Hraparak.am» կայքում տեղադրվել է Արծրուն Հովհաննիսյանի հետ կարճ հարցազրույց՝ կապված բանակային հրամանատարների անձնակազմի հետ աշխատանքի գծով տեղակալների մի խմբի՝ Գերմանիայում վերապատրաստման դասընթացների մասնակցելու շուրջ լուրի հետ, որի ընթացքում Արծրուն Հովհաննիսյանը մեկնաբանել է, որ դա փակ տեղեկատվություն է, սակայն կարող է պարզաբանել, որ Գերմանիայի հետ ռազմաուսումնական վերապատրաստման ծրագրեր կան, և որ հանդուրժողականության դասընթացները վերաբերում են բարեվարքությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, հանդուրժողականությանը և այլն:

111 Տե՛ս «analitik.am», «Երեխաների շրջանում տրանսգենդերության քարոզչությունը՝ սորոսականների օրակարգում. Անի Հովհաննիսյան /տեսանյութ/», 2020 թ. https://analitik.am/news/view/585126 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
«Ani Hovhannisyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/1490081131215399/videos/923682858191848 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

Կայքը, այնուամենայնիվ, մեկնաբանել է իրեն հարմար ձևով, գրելով. *«Փաստորեն, պաշտպանական գերատեսչությունը գաղտնի է պահում անգամ հրամանատարների համար կազմակերպվող սեմինարների անունները, դրանցից ռազմական գաղտնիք սարքելով: Ի դեպ, մեր տեղեկություններով, սեմինարի մասնակիցների թվում կա սպա, որը նույնիսկ պատժվել է ոչ ավանդական կողմնորոշում ունեցող զինծառայողին նեղելու համար»*:[112]

«Իրավունք» թերթի գլխավոր խմբագիր Հովհաննես Գալաջյանը ևս սահմանադրական փոփոխությունների դեմ տարվող քարոզչության շրջանակում փորձել է այն կապել ԼԳԲՏ անձանց շահերի հետ՝ փորձելով վարկաբեկել Սահմանադրության փոփոխության անհրաժեշտությունը և դրա իրական նպատակը: Այդ կոնտեքստում նա, մասնավորապես, գրել է, թե «այո»-ի քարոզչության շրջանակներում ԼԳԲՏ ֆորումներ են լինում, «այո»-ի քարոզչությամբ են զբաղված «տարբեր ժուժուներ» (նկատի ունի «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարից հայտնի դարձած Դալարիկցի Ժուժուին, ում խտրականության ենթարկվելու պատմությունը դարձավ ծաղրի և ատելության խոսքի առարկա ինչպես եթերով, այնպես էլ հետագայում՝ հասարակության շրջանում):[113]

ԼԳԲՏ անձանց թիրախավորումը Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծվեց լայնամասշտաբ զինված հակամարտություն Լեռնային Ղարաբաղի և հարող շրջանների հայ-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Պատերազմը ծանր էր, Հայաստանի և Արցախի ժողովուրդը պայքարում էր ադրբեջանաթուրքական մեծ ուժի դեմ: Ժողովրդի ամբողջ ներուժը կենտրոնացած էր պատերազմի և դրա հետևանքների չեզոքացմանը: Կամավորագրումներից բացի ժողովուրդը ներգրավված էր բազմապրոֆիլ կամավորական աշխատանքներում՝ պատերազմից տուժածներին և պատերազմի մասնակիցներին ինչպես սոցիալական, այնպես էլ՝ այլ անհրաժեշտ աջակցություն տրամադրելու համար: Ինչպես Հայաստանի և Արցախի տարածքում ապրող բնակչությունը և դրա մաս կազմող ԼԳԲՏ անձինք ներգրավված էին ինչպես ռազմական գործողություններում, այնպես էլ՝ կամավորական աշխատանքներում: Եվ չնայած այս ծանր պայմաններին, երբ ռիսկի տակ էր ամբողջ պետության ազգային անվտանգությունն ու բնակչության կյանքը, շատերը շարունակում էին ԼԳԲՏ անձանց թիրախավորումն ու նրանց հանդեպ ատելության սերմանումը:

Թշնամանք հարուցող գրառումները հատկապես տարածված էին սոցիալական ցանցերում: Ստորև ներկայացված են որոշ օրինակներ.

112 Տե՛ս «hraparak.am», «Սպաները մեկնել են Գերմանիա՝ սեռական փոքրամասնությունների հետ շփվել սովորելու», 2020 թ. https://hraparak.am/post/6befc7d42a6dd70ed94b86b00238856b (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
113 Տե՛ս «iravunk.com», «ԱՌԱՀՋ, ԴԵՊԻ «ԵՐԿԻՐ- ՍՊԻԴ-ԻՆՖՈ», 2020 թ. https://iravunk.com/?p=106402&l=am (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

«Շտապ պետք է գեյերին ուղարկել առաջնագիծ. Նրանցից մեկի մազը ծռվի ողջ աշխարհը կդատապարտի Ադրբեջանին»:[114]

«Ասում եմ կարող ա մի քանի սևամորթ, էն կապույտ մազերովաղջկան, մի երկու գալուբոյ, էն ԱԺ եկած սեռափոխված Լիլիթ էր Վարշամ էր, տանենք Ստեփանակերտ, շուխուր դնենք, որ Ադրբեջանը սպառնում է Արցախի սևամորթներին (ռասիզմ) ու ԼԳԲՏ ներկայացուցիչներին, միջազգային հանրությունը միամիտ զարթնի?»:[115]

«Ի՞նչ ձևով հասցնենք եվրոպացիներին, որ Արցախի անտառներում ադրբեջանցիները ոտնահարում են գեյ կոալաների իրավունքները»:[116]

«ԼԳԲՏ-ներ գնացեք սահման ու ամբողջ աշխարհին կհուզի էս պատերազմը! Ընդամենը մի քանի րոպե. Արդյունքը երաշխավորված է ցավոք! Էս աշխարհը՝ հիմար մարդու նման մի բան է!»:[117]

«Մի հարց ....ԼԳԲՏ՝..... սրանց չեն « ճանապարհելու» ? (տոմս առնենք գնան մի ուղղությամբ) պատերազմի ավարտից հետո նորմալ ապրենք»:[118]

«Բա տրանսգենդեր ու լեզբի, հարամ շների՝սորոսականների գունդն ո՞ւր է, որ գնան սահման: Սորոսական եզի ու բոզի վաստակներին քարշ տվեքսահման առաջին գիծ: Մատաղ ծաղիկը մեռնում է ,իսկ էս աղբակույտերը ինքնապարգևատրումով բյուջեն թալան են տալիս»:[119]

«Ախր ինչի ենք էսքան տանջվում միջազգային հանրության ուշադրությունը գրավելու համար, ինչու ենք անտեսում փոքրամասնություններին, մի հատ առանձին ԼԳԲՏ ջոկատ կազմեք և ուղարկեք առաջնագիծ, մի հատ էլ լրատվամիջոց կցեք: Եվ բոլոր մարդկանց իրավունքների պաշտպանների և միջազգային հրաշք հանրության սիրտը կփշրվի: Էլ CNN–ի շենքի դիմաց գիշերներ պետք չի լինի լուսացնել, նրանք իրենց ոտքով կգան մեզ մոտ (Սև)»:[120]

---

114 Տե՛ս «Ուղեցույց հեռուստալիք» ֆեյսբուքյան էջ, 2020 թ. https://www.facebook.com/ughecuyc/photos/a.667659806689392/3147603105361704/ (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
115 Տե՛ս «Արզևեցոնց Ավագ» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=2738539309740291&id=100007527468017 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
116 Տե՛ս «Գարեգին Միսկարյան» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/gmiskaryan/posts/5381344461891559 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
117 Տե՛ս https://www.facebook.com/tatusho.gasparyan/posts/1516090678582713 հղումը (գրառումը ջնջվել է):
118 Տե՛ս «Լիլիթ Գալստյան» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ.https://www.facebook.com/Lil.galstyan88/posts/2756903494578216 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
119 Տե՛ս «Aspram Khacheni» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://upload.facebook.com/aspram.hayrapetyan/posts/2584532501859236 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
120 Տե՛ս «Satenik Tadevosyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/satenik.tadevosyan.9/posts/3452473851532774 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

«Մի քանի հոգի աղանդավոր ու լգբտ ուղարկեք առաջնագիծ որ էլ մենակ կոչեր չանեն»:[121]

«Կհարգեմ այն նոր ղեկավարին, ով կարգելի կորոնավիրուս բառն արտաբերելը, դիմակ կրելը, կասկածելի ՀԿ-ների գործունեությունը ամբիոնից անկիրթ խոսքը, ոստիկանների կողմից օրենքի խախտումները, մեր բնակչությանը առողջապահական կասկածելի ծրագրերում լաբորատոր առնետի տեղ օգտագործելը ու էլի շատ նմանատիպ ստորացնող ծրագրեր կիրառելը: Չմոռանամ կոնվենցիաներն ու ԼԳԲՏ- ն Եթե ինձ հետ համաձայնողներ կան խնդրում եմ արձագանքել ու լրացնել»:[122]

«ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԸ ԳԻՏԵՆ . լ.գ.բ.տ, համասեռամոլներ և այլ սրբապղծություններ, երբ որ համատարած տեղ են տալիս և հովանավորվում կառավարության մակարդակով՝ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՅՈՑԱՇԽԱՐՀՈՒՄ ՇԱՐԺՈՒՄ ԵՆ ԱՍՏԾՈ ԱՀԵՂ ՁԱՅՐՈՒՅԹԸ .. այդ մասինբազմիցս շեշտված է ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ:ՍԹԱՓՎԵԼ Է ՊԵՏՔ! ԱՍՏԾՈ ԴԵՄ ԲՈԼՈՐՆ ԱՆՁՈՐ ԵՆ»:[123]

«Մեր տղաները ամենաքաջն են, ամենաարին են, ամենաազնվացեղ, ամենագեղեցիկ ու ամենահերոս են ու թող կորչեն բոլոր ԼԳԲՏ-ները,իրենց համար մեր Սուրբ հողում տեղ չկա»:[124]

«Պատմության մեջ միշտ էլ այդպես է եղել, երբ հեղափոխական այլասերվածությանը, ստին, կեղծիքին, կողոպուտին, ահաբեկչությանն ու քաոսին վերջ է դրել ազգայնական ուժը: Պոռնկածին լգբտ համայնքը չի կարող խուսափել բռնություններից, մենք դրանց կստիպենք զենքի դիմել: Երբեք թույլ չենք տա, որ սատանայածին պոռնո-այլասերվածներն իրենց հրեշտակի տեղ անցկացնեն»:[125]

«Մեր աշխարհաքաղաքական իրավիճակում տոտալ միլիտարիզացիայից չես փախչի: Բնականաբար, կրթությունը, դեմոգրաֆիան ու բարձր-տեխնոլոգիական արդյունաբերությունը չմոռանալով: Մի քիչ էլ հա, մշակույթը, գոնե միքիչ: Ու առանց ԼԳԲՏ-իզմերի, առանց թրքերի հետ բարիդրացիություն անելու ուտոպիաների (հոմոֆոբիա չէ, հակահումանիզմ չէ, հասարակ պրագմատիզմ է»:[126]

---

121 Տե՛ս «Hovhannes Terteryan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/hovhannes.terteryan/posts/980736015738550 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
122 Տե՛ս «Аракс Саргсян» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=357742372036442&id=100034020451758 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
123 Տե՛ս «Taron Pogosyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/taron.pogosyan.3/posts/3353054768109426 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
124 Տե՛ս «Maria Aghajanyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/maria.aghajanyan94/posts/3983705994992358 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
125 Տե՛ս «Artsruni Avetisyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/artsruni.avetisyan.9/posts/1580403098809251 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
126 Տե՛ս «Garry Arzumanyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/garry.arzumanyan/posts/3295888057200374 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

«Տեսաս էդ համասեռամոլ-գոմիկները ո՞ւր են կորել:

Հիմա մի գոմիկի որ ջարդեինք մեր սաղ ազգին կդատափետեին, բայց որ առողջ ու խելացի մի ողջ սերունդ կոտորվում են աշխարհը պապանձվել, լեզուն կուլ է տվել»:[127]

«Աշխարհում մի հատ գոմիկ ծեծելու համար սաղ խառնվում են իրար: Էսքան մարդա զոհվում մենակ կոչ են անում:

ԵՄ, ՆԱՏՕ, ԵՏՄ ու լիքը նման անիմաստ բաներ սաղիտ ԼԳԲՏ հերը անիծած»:[128]

Նույնատիպ բովանդակությամբ հոդվածներ են հրապարակել նաև որոշ լրատվամիջոցներ, ստորև ներկայացված են մի շարք օրինակներ.

«Yerevan.today». *«Եվրոպական ու ամերիկյան կառույցներն ու նրանցից ֆինանսավորվող կազմակերպությունները հիմնականում ակտիվացել են հենց այս թեմաների ժամանակ, երբ խախտվել են քաղակտիվիստների, ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների իրավունքները, բարձրագոչ ելույթներ են ունեցել, որ 21-րդ դարում չի կարելի նման բան թույլ տալ, որ մարդը բարձրագույն արժեք է, որ պետք է հարգել բոլորի ազատություններն ու իրավունքները, որ... Եվ այսպես շարունակ, և այդ ամենը չմոռանալով համեմել «ոչ ժողովրդավար, հետամնաց Ռուսաստանի» պրոպագանդայով: Իսկ այսօր, երբ այդ նույն 21-րդ դարում Ադրբեջանի իշխանությունն անթաքույց, ոչ միայն բազմաթիվ միջազգային նորմեր է խախտում, հակահումանիստական զենքեր կիրառում խաղաղ բնակչության նկատմամբ, այլև իրական մարդիկ են զոհվում, բազմաթիվ ճակատագրեր են խեղվում, երբ ապրել-չապրելու, լինել-չլինելու հարցն է վճռվում, հարց է առաջանում, թե ի՞նչ են անում այդ նույն կառույցները»*:[129]

«Global News Armenia». *«Ի՞նչ կոչեր էին անում ԵՄ և ԱՄՆ դեսպանատները Շուռնուխում ծեծի ենթարկված ԼԳԲՏ ակտիվիստների մասին և ինչո՞ւ են լռում հիմա»*:[130]

Նույնաբովանդակ հայտարարություն է կատարել նաև **ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավոր Արման Աբովյանը**՝ առանց կաշկանդվելու իր մանդատից. *«Ձեր "ազատ" Եվրոպան չի արձագանքում, երբ թուրքերը գնդակահարում են գերիներին, իսկ զոհված հայ զինվորներին գշխատում են տեսախցիկների առաջ: Խոսե՛ք, այ "եվրոմիությունասեր հայ քաղաքացիներ": Ձայներդ դուրս չի գալիս... Թե՞ թուրքերը անպայման պետք է մի այլասերվածի կամ ֆեմինիստուհու մի փոքրիկ վնաս տան (օրինակ ոտքի բութ մատը տրորեն), որ նոր ձեր եվրոտերերը իրար գան: Ամո՛թ է...»*:[131]

---

127 Տե՛ս «Diana Barseghyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://upload.facebook.com/diana.barseghyan.7/posts/3287550241364268 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
128 Տե՛ս «Pavel Adamyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/pavel.adamyan/posts/3313966032056915 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
129 Տե՛ս «yerevan.today», «Քաղաքակիրթ Արևմուտքի երկու երեսը», 2020 թ. https://yerevan.today/all/politics/66760/qaghaqakirt-arevmoutqi-erkou-eresy (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
130 Տե՛ս «Global News Armenia» ֆեյսբուքյան էջ, 2020 թ. https://www.facebook.com/glnewsarmenia/posts/3767995906543820 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
131 Տե՛ս «hraparak.am», «Հիմա կերա՞ք, բա ինչի՞ համար ձայներդ դուրս չի գալիս , այ «ազատ արժեքների» սիրահարներ», 2020 թ. https://hraparak.am/post/dab8fbb4bedc97ba0888c81a5f92aad2 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

Տարածվել են նաև հասարակական կազմակերպությունների և իրավապաշտպանների, իշխող ուժի ներկայացուցիչների լուսանկարներ՝ կից նրանց հասցեին անձնական վիրավորանքներ, հայհոյանքներ պարունակող գրառմամբ:[132]

Համացանցում տարածվել են նաև ծաղրանկարներ, որոնցում ծաղրի են ենթարկվում նույնասեռական և տրանս անձանց. քաղաքական գործիչներին ներկայացնելով որպես նույնասեռականներ՝ որպես ծաղրի կամ անարգանքի միջոց:

Օրինակներից մեկում պատկերված է Նիկոլ Փաշինյանը՝ ծիածանագույն շապիկով:[133]

Պատրաստվել է անիմացիոն տեսանյութ, որում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ու Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանը ներկայացվել են որպես նույնասեռական զույգ:[134] Այսպիսով փորձ է արվել ստորացնել Ալիևին և Էրդողանին, ինչի արդյունքում՝ որպես նսեմացուցիչ երևույթ ներկայացվել է նույնասեռականությունը:

Հարկ է նկատել, որ գրեթե բոլոր գրառումներում հիշատակվում է միջազգային հանրության ուշադրությունը գրավելու նպատակը: Միևնույն ժամանակ, միջազգային կառույցների կողմից ռազմական գործողությունների և դրանց ընթացքում պատերազմական հանցագործությունների, մասնավորապես, ադրբեջանական զինված ուժերի կողմից խաղաղ բնակչության, քաղաքացիական ենթակառուցվածքների, փրկարար ծառայությունների և հոսպիտալների, մշակութային ժառանգության ինչպես հրետանու և օդուժի, այնպես էլ՝ չթույլատրված զինատեսակներով ուղղակի թիրախավորման դեմ գործուն քայլեր չձեռնարկելու արդյունքում, լայն հասարակության համար այս գրառումները կարող են հավաստիության տպավորություն թողնել և հավանության արժանանալ, ինչն իր հերթին լրացուցիչ բացասական տրամադրություն կստեղծի ԼԳԲՏ անձանց շուրջ:

132 Տե՛ս «Оганнисян Арман» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/photo/?fbid=191380805906920&set=a.115695040142164 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
133 Տե՛ս «Alex Aramyan» ֆեյսբուքյան օգտատեր, 2020 թ. https://www.facebook.com/alex.aramyan.351/posts/116700626879268, https://www.facebook.com/alex.aramyan.351/posts/116697840212880 (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):
134 Տե՛ս «ArmYE», «Kill Dim 2020 / Կիլլ Դիմ / Килл Дим», 2020 թ. https://www.youtube.com/watch?v=li6TQlnPxYE (հղումը կատարվել է՝ 02.04.21 թ.):

ԱՄՓՈՓՈՒՄ

2020թ. ընթացքում ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակի դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ.

- *ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքները շարունակվում են ոտնահարվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ընդ որում՝ նախորդ տարիների համեմատությամբ՝ 2020թ. իրավախախտումների թիվը աճել է.* հաշվետու տարվա ընթացքում գրանցվել են ֆիզիկական բռնության, բռնության սպառնալիքների, անձնական տվյալների ապօրինի բացահայտման դեպքեր, սեռականության հիմքով աշխատանքից ազատելու, ուսումնական հաստատությունից հեռացնելու դեպքեր,
- *սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ընտանեկան բռնության դեպքերը հաճախ են հանդիպում.* ԼԳԲՏ անհատները, ընտանիքի անդամների շրջանում ազնվանալուց՝ իրենց ՍԿԳԻ մասին հայտնելուց հետո բախվում են ֆիզիկական, հոգեբանական և տնտեսական բռնության: Որպես բռնության պատճառ նշվում են ՍԿԳԻ մասին ընտանիքի անդամների անտեղյակությունը, հանրության և հարազատների առջև ամոթի զգացումը,
- *չնայած իրավախախտումների համատարած բնույթին՝ ԼԳԲՏ անձինք խուսափում են իրավապահ մարմիններին դիմելուց.* նրանք չեն վստահում ոստիկանության աշխատակիցներին, մտավախություն ունեն, որ իրենց կծաղրեն, կնվաստացնեն, կտարածեն իրենց սեռականության վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ՝ արդյունավետ չեն համարում իրավական պաշտպանության մեխանիզմները,
- *իրավապահ մարմինները, իրենց հերթին, շարունակում են խտրական վերաբերմունքի արժանացնել ԼԳԲՏ համայնքին,* իրավապահ համակարգի աշխատակիցների մոտ նկատվում է սեռականության վերաբերյալ տեղեկատվության և զգայունության պակաս, խուսափում են գործերով քննության առարկա դարձնել հանցավոր ոտնձգությունները սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության նկատմամբ խտրականությամբ զուգորդված կատարելու հանգամանքը,
- չնայած նրան, որ ատելության խոսքի դեմ պայքարի շրջանակներում ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է նոր հոդվածով, որով պատասխանատվություն է նախատեսվել բռնության հրապարակային կոչերի և բռնություններն արդարացնելու համար, *գործնականում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնության կոչերի որոշ դեպքերը պատշաճ իրավական որակում չեն ստացել,*
- *տարվա ընթացքում շարունակվել է ԼԳԲՏ անձանց խնդիրների օգտագործումը քաղաքական շահարկումների, քաղաքական իշխանության ներկայացուցիչների վարկաբեկման նպատակով:* Այսպիսի շահարկումները շարունակվել են նաև պատերազմի ընթացքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԳԲՏ անձանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը ՀՀ-ում ապահովելու համար՝ առաջարկում ենք.

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին՝

- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին:
- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների պլանում:
- ԼԳԲՏ մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների ոտնահարումները դատապարտելուց:
- Իրականացնել մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի, միջազգային իրավական փորձի համապարփակ ուսումնասիրություն և երկրում առկա իրավիճակի վերլուծություն՝ նախատեսելու համար ատելության խոսքի՝ մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան և գործուն իրավակարգավորումներ:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ՝

հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը:

- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործությունների զոհերի և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես՝ հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններո

Զանգվածային լրատվության միջոցներին՝

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Իրավահավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև՝ այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն 2012 թ-ից ի վեր վարել է ռազմավարական դատավարություններ, որոնց նպատակն է հասնել փոփոխությունների ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ՝ հանրային քաղաքականության մեջ:

2018 թ-ին ռազմավարական դատավարություններից երեքի քննությունը ունեցել է որոշակի զարգացում: Դրանցից երկուսը գտնվում են ներպետական դատական ատյանների վարույթում, իսկ մեկը՝ միջազգային: Կազմակերպության կողմից վարվող ռազմավարական դատավարության այլ դեպքերով զարգացում չի դիտվել 2020 թ.-ի ընթացքում:[135]

Վարչական դատարանի քննության առարկա վեճը վերաբերում է Փինքի կողմից 2017 թ-ին հրապարակված սոցիալական գովազդների պաստառների շուրջ ծագած խնդրին՝ հետևյալ փաստերով՝

2017թ-ին վերոնշյալ գովազդային պաստառները ներկայացվել են ՀՀ մշակույթի նախարարությանը՝ սոցիալական գովազդ ճանաչելու պահանջով: Պաստառների ճանաչումը սոցիալական գովազդ հնարավորություն կտար օգտվել սոցիալական գովազդի համար նախատեսված հնարավորություններից, այն է՝ դրանց անվճար տեղադրումը գովազդային վահանակների վրա, դրանց համար պարբերաբար տրամադրվող վահանակներից օգտնվելու հնարավորություն և այլն:

Մշակույթի նախարարությունը մերժել է Փինքի դիմումը՝ հիմնավորմամբ, որ ներկայացված գովազդները որևէ հանրային կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում, բացի այդ, ժողովուրդը հեռուստահաղորդումներից ծանոթ է «ոչ ավանդական սեռական կողմնորոշում» ունեցող մարդկանց գոյության մասին, հետևաբար դրանց տարածման անհրաժեշտությունը չկա:

Փինքի կողմից ներկայացվել է հայցադիմում վարչական դատարան՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից դիմումը մերժելու մասին վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու և նախարարությանը սոցիալական գովազդները սոցիալական ճանաչելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջով:

Հայցադիմումը մերժվել է առաջին ատյանի վարչական դատարանի կողմից: Որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը մասնակի բավարարել է բողոքը՝ գործը ուղարկելով առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: 2020թ-ի ընթացքում կայացել է մեկ նիստ, գործի քննությունը շարունակվում է:

Ներպետական ատյաններում շարունակվում է Շուռնուխ գյուղում տեղի ունեցած բռնության դեպքի քննությունը.

2018 թ. օգոստոսի 3-ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում հանգստացող 9 երիտասարդներ, այդ թվում՝ ԼԳԲՏ ակտիվիստներ, ծեծի և հոգեբանական բռնության են ենթարկվել նույն գյուղի և Գորիս քաղաքի ավելի քան 20

135 Մանրամասն, տե՛ս այստեղ. https://www.pinkarmenia.org/strategiclitigation/

բնակիչների կողմից, որոնք տուժողներից պահանջել են հեռանալ գյուղից, հարվածել են նրանց քարերով, ձեռքերով ու ոտքերով: Բռնության առնչությամբ քրեական գործ է հարուցվել միայն ծեծի հոդվածով, և որևէ անձ չի ներգրավվել որպես մեղադրյալ: Ցուցմունքներով իրենց մեղքն ընդունած անձանց նկատմամբ կիրառվել է համաներում և քրեական գործի վարույթը կարճվել է: Բռնություն գործադրած անձանց մեծամասնության նկատմամբ ընդհանրապես քրեական հետապնդում չի իրականացվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինը գտել է, որ նրանց գործողություններում հանցակազմ առկա չէ:

2019 թ. դեկտեմբերին քրեական գործով վարույթը կարճելու որոշումը տուժող կողմի բողոքի հիման վրա վերացվել է, քրեական գործի վարույթը վերսկսվել է: 2020 թ. ընթացքում գործով ներկայացված ևս 2 բողոքի արդյունքում դատարանները արձանագրել են, որ վարույթն իրականացնող մարմինը քննությունը թերի է կատարել:

Գործով քննության վերսկսումից հետո որևէ անձի մեղադրանք չի ներկայացվել: ՀՀ քրեական օրենսգրքի՝ խտրականության համար պատիժ և պատասխանատվություն նախատեսող հոդվածը քննության առարկա չի դարձվել:

2021 թ. փետրվարին վարույթն իրականացնող մարմինը կրկին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու մասին, այս անգամ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Որոշումը բողոքարկվել է վերադասության կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում շարունակվում է Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործի քննությունը.

2012թ-ին «Դի Այ ՈՒայ» ակումբի վրա տեղի ունեցավ հարձակում, ակումբը պայթեցվեց մի խումբ անձանց կողմից: Պայթյունի կազմակերպումը, ինչպես ի սկզբանե խոստովանել էին ամբաստանյալները, պայմանավորված է եղել Օգանեզովայի լեսբի լինելու, Ստամբուլ քաղաքում գեյ շքերթի մասնակցելու, ինչպես նաև ակումբի՝ ԼԳԲՏ անձանց հավաքատեղի լինելու հայտնի հանգամանքների հետ: Այս մասին է վկայում փաստն առ այն, որ պայթյունից որոշ ժամանակ առաջ ակումբ են ներխուժել անձինք՝ փորձելով հետապնդել ու ահաբեկել այնտեղ հավաքված անձանց: Արդյունքում ԼԳԲՏ համայնքի շատ ներկայացուցիչներ և համակիրներ սկսել են վախենալ ակումբում իրենց նկատմամբ հոմոֆոբ խմբերի հնարավոր հարձակումներից: Դեպքին հաջորդեց ակումբի սեփականատիրոջ նկատմամբ հետապնդումները, սպառնալիքները: Հարուցվեց քրեական գործ՝ գույքին վնաս պատճառելու հանցակազմով, ինչը, սակայն, ամբողջ ծավալով չէր արտահայտում հանցագործության էությունը, ծանրությունը՝ պայմանավորված դրա շարժառիթով: Կալանավորված անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխվել է «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության պատգամավորի կողմից ներկայացված գրավի դիմաց:

Առաջին ատյանի դատարանի վճռով ամբաստանյալները դատապարտվել են երկու տարվա ազատազրկման, սակայն կիրառվել է պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ դրույթը և նրանք ազատ են արձակվել: Վերաքննիչ դատարանը վճիռը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ

չի ընդունել:

Ակումբի սեփականատերը դիմել է Եվրոպական դատարան: 2019թ-ի մայիսի 17-ին Դատարանի կողմից դեպքը կոմունիկացվել է: ՀՀ Կառավարությունը ՄԻԵԴ պահանջով պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

1. *Արդյո՞ք 2012թ-ի մայիսի 8-ի հարձակումը և դրան հաջորդող իրադարձությունները, ներառյալ՝ ենթադրյալ սպառնալիքները, նվաստացումներն ու հետապնդումները հանգեցրել են Դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի և նրա մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հանդեպ միջամտության՝ Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների խախտմամբ:*

2. *Հաշվի առնելով Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներից բխող պոզիտիվ պարտավորությունները՝ արդյո՞ք 2012թ-ի մայիսի 8-ի հարձակումը և Դիմումատուի կողմից ներկայացված հետագա վատ վերաբերմունքի և հետապնդումների վերաբերյալ բողոքների քննությունը եղել է նշյալ դրույթների նպատակներին համապատասխան, ներառյալ՝ իրավախախտների արարքում խտրական շարժառիթի բացահայտման ուղղությամբ:*

3. *Արդյո՞ք Դիմումատուն տնօրինել է Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների ներքո բողոքարկման արդյունավետ միջոցների՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջների համաձայն:*

4. *Արդյո՞ք Դիմումատուն Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներին համընթաց ենթարկվել է խտրականության իր սեռական կողմնորոշման հիմքով՝ ի հակադրություն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի:* Պետության դիտարկումները ստանալուց հետո դիմումատուի անունից ներկայացվել է առարկություններ և անդրադարձ վերոնշյալ հարցերին: Սպասվում է ՄԻԵԴ վճիռը:

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007թ-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես Փինք Արմենիա: Փինքը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքահեն կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստեղծվել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277